№ 48 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 6

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 6 № 48

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամս. 10 րուբ., 11 ամս. 10 ր., 10 ամս. 9 ր., 9 ամս. 8 ր., 7 և 6 ամս. 6 ր., 5 ամս. 5 ր., 4 ամս. 4 ր., 3 ամս. 3 ր., 2 ամս. 2 ր., 1 ամս. 80 կ. և առաքման ծախք՝ 20 կ.։ Ամերիկա տարեկան 6 դոլլար, Եւրօպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 րուբլի, Թիւրքիա 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նախկին հասցէն և 40 կ. նամականիշ։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

եկող հիւանդների համար ամեն օր, Վոկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի։

Տելեֆօն 695

Ե. Գ. ՖԷԴՈՐՈՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։

Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների։

Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի։

Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։

Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՁԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ։

Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը։

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։

Բ. Ս. ՄՈՒՍԽԵԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ՄԻՐԶՕՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։

Ն. Գ. ՁԻՁԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։

Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։

(օ. մ.) ա. 38. 100—32

ՆՈՐԻՑ ՅՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

Մենք մեր բարոյական պարտքն ենք համարում դարձեալ և դարձեալ յորդորել, որ Թիւրքահայ պանդուխտները չը կորցնեն յարմար ժամանակը և շտապեն հայրենիք վերադառնալ։

Երէկվայ մեր առաջնորդողով պարզեցինք, որ զգոյշ պէտք է լինել զանազան դաւադրութիւններից և վերապահութեամբ ընդունել երկիւղներ ներշնչող կասկածելի զանազան լուրերը, որոնք կարող են յետ մղել պանդուխտներին հայրենիք վերադառնալու մաքից։

Գործը կարևոր է. ուստի անհիմն երկիւղները չը պէտք է նրան տապալեն ու խեղդեն։

Մենք զետեղեցինք «Մշակի» երէկվայ համարում նաև հեռագրական մի կարևոր լուր, վերցրած «Баку» լրագրից, որ վերաբերում էր պանդուխտների վերադարձի խնդրին։ Ահա այդ լուրը։

Վերջացան ռուս թիւրքական բանակցութիւնները այն 60,000 հայերի մասին, որոնք 1895—6 թւականների կոտորածների ժամանակ փախել ու ապաստանել էին Կովկաս։

Բանակցութիւնները վերջացել են նրանով, որ Թիւրքական կառավարութիւնը համաձայնել է թոյլատրելու Ռուսաստան գաղթածներին վերադառնալ Վան և Էրզրում այն պայմանով, որ նրանք Թիւրքական անցագիրներ ունենան։

Ռուսական հպատակութեան մէջ մնալ ցանկացողները զրկվում են Թիւրքիայում ապրելու իրաւունքից։

Թէ ինչ մանրամասն հրահանգներ են մշակված պանդուխտների վերադարձի համար՝ այդ կիմանանք յետոյ, երբ երկու պետութիւնների միջև եղած բանակցութեան արդիւնքը հրատարակված կը լինի։

Առ այժմ կարևոր է արձանագրել, որ Թիւրքահայ պանդուխտների վերադարձի խնդիրը դրված է հրապարակի վրա իբրև հերթական խնդիրներից մէկը, և նրան ոչ միայն անտես չեն առնում պաշտօնական մարմինները, այլ և նրա առիթով որոշ հրահանգներ են մշակում։

Պանդուխտների վերադարձը ներկայումս այլևս գաղտագողի, մասնաւոր դրդումների և վերապահ գործողութեան մի թելադրանք չէ, նա պատկանում է այն երևոյթների շարքին, որոնց վերաբերութեամբ Թիւրքահայը, սահմանադրութիւն ստանալուց յետոյ, կարող է որոշ դիրք բռնել և օգտվել օրինական աջակցութեան դիւրութիւններից։ Թիւրքիայի և Ռուսաստանի միջև կայացած համաձայնութիւնը պաշտօնական արտայայտութիւն է ընծայել այն խնդրին, որ մինչև այժմ մասնաւոր բարեհաճութիւնների և շնորհների բնաւորութիւնն էր կրում։

Թիւրքահայ պանդուխտներ, գարունը սկսվում է և հողերը սերմանելու ժամանակն է։ Գնացէք ձեր ծննդավայրերը և կեանքի հրաւիրեցէք ամայացած դաշտերը և խոպանացած անդաստանները։

Սերմ տուէք հողին, որ նա ձեզ հունձ տայ։ Աշխատանք թափեցէք հողի վրա, որ նա ձեզ հաստատ ապրուստ ապահովէ։ Բեղմնաւորեցէք ձեր տնտեսութիւնը, որ նա հարստութիւն տայ երկրին և ժողովրդին։

Մի ուշանաք։

Եթէ այժմ չը գնացիք, այն ժամանակ դարձեալ մի տարի կամ գուցէ մի քանի տարով կը յետաձգէք երկրի տնտեսական վերանորոգութեան գործը։

Երկիրը սպասում է ձեզ։ Գնացէք, աշխատաւոր ոյժեր, և նորից կեանքի հրաւիրեցէք երկիրը, որ դարեր շարունակ կերակրել է ձեր նախորդ սերունդները։

Ողջերթ ձեզ, մայր հողի հարազատ ներկայացուցիչներ։

Ձեզ սպասում են։

Ս. Քալանթար

ԱՆԳԼԻԱՅԻ ԾՈՎԱՅԻՆ ԶԻՆՄԱՆ ՀԱՐՑԸ

Լօնդօն, 4 մարտի

Համայնքների ժողով։ Ծովապետութեան առաջին լորդ Մակկէննա մտցրեց ծովային վարչութեան նախահաշիւը։ Մակկէննան իր բացատրութիւնների մէջ յայտնեց, որ կատարելապէս համակրում է խաղաղութեան քաղաքականութեան, զինաւորութիւնների սահմանափակման և ռէֆօրմներին, բայց երկրի անվտանգութիւնը պէտք է ապահովվի, ինչ գնով էլ որ լինի դա։ «Աքսիոմա է, որ կղզիական դրութիւնը, մեր կալուածքների լայնածաւալ լինելը, մեր կայսրութեան առանձին մասերի աշխարհագրական դրութիւնը և առևտրի ընդարձակութիւնը պարտաւորեցնում են պահել համապատասխան ոյժի նաւատորմ։ Նաւատորմի ուժեղացման սահմանները որոշվում են, նայելով թէ այդ կողմից ինչ աջողութիւններ ունեն օտար պետութիւնները, որոնք արագութեամբ զօրեղացնում են իրանց նաւատորմերը, թէպէտ և նրանցից ոչ մէկը չէ ուժեղացվում այն արագ չափով, որպէս գերմանականը։ Փաստերի հիման վրա Մակկէննան ապացուցեց, որ անցեալ տարվայ ծովային բիւջէտի մտնելու օրից անգլիական նաւատորմի գերակշռութիւնը գերմանականի վրա արտայայտվում էր յարաբերութեամբ տասի դէպի հինգը։ Գերմանիայի նաւակառուցման նոր պրօգրամի համաձայն երկու մեծ նաւերի հիմքը դնելու շնորհիւ երևաց, որ Անգլիան տասներկու նաւ ունի Գերմանիայի ինն նաւի դէմ։ Դրանից մինիստրը եզրակացնում է, որ ոչ ոք չէ կարող պախարակել անգլիական կառավարութիւնը մրցակցութեան համար զինաւորութիւնների կողմից։ Վերջը Մակկէննան ասաց. «1911 թւին մենք կունենանք նոր տեսակի 16 նաւեր նոյն ձևի 13 նաւերի դէմ, որ նախատեսվում է գերմանական ծրագրով։ Պարլամենտից է կախված լիազօրութիւն տալ կառավարութեանը ներկայ ֆինանսական տարվայ մէջ հիմք դնել էլի «Դրէդնօուտ» տիպի չորս զրահակիր նաւ»։

Բալֆուրի ճառից յետոյ, որը կատարելապէս անբաւարար համարեց կառավարչական պրօգրամը, ամբիօն բարձրացաւ առաջին մինիստրը, որը նախ և առաջ մատնացոյց արեց, որ բրիտանական նաւատորմի ներկայ զօրութեան պահպանման սկզբունքը աչքի առաջ ունենալով, այն՝ թէ նա պէտք է հաւասար լինի երկու այլ պետութիւնների ծովային ոյժին, անհրաժեշտ է ի նկատի ունենալ ոչ միայն «Դրէդնօուտ» տեսակի նաւերը։ «Առաջնակարգ նշանակութիւն ունեցող խնդիր է այժմ զինւորական նաւերի կառուցման այժմեան դրութեան հարցը Գերմանիայում։ Դիպլօմատիական յարաբերութիւնները Գերմանիայի և մեր միջև բացսիրտ և բարեկամական են և մենք չենք տեսնում պատճառներ, թէ ինչու նրանք հէնց այդպէս էլ չը պիտի մնան այսուհետև։ Նոյն բացատրութեամբ, որպէս այդ արեց գերմանական կառավարութիւնը, ես յայտնում եմ, որ մենք աչքի առաջ ունենք այն, որ տեսնելով՝ թէ մեր ազգային կեանքը և ապահովութիւնը կախում ունեն մեր տիրապետութիւնից ծովի վրա, մենք չենք կարող պակասեցնել զինաւորութիւնները, չենք կարող թոյլ տալ, որ հնարաւորութիւն ստեղծվի սպառնալու այդ ապահովութեանը և տիրապետութեանը։ Գերմանացիները հաւատացնում են, որ եթէ մենք ամենևին չը կառուցանէինք «Դրէդնօուտներ», նրանք այնուամենայնիւ կը շարունակէին ի կատար ածել իրանց նաւակառուցման պրօգրամը։ Եթէ այդպէս է, ուրեմն հնարաւորութիւն չը կայ համաձայնութիւն կայացնելու փոխադարձ զինաթափման մասին։ Հաւատացնում են, որ իբր թէ մենք մրցակցութիւն ենք մտցնում զինաւորման մէջ, բայց մենք աշխատում ենք, ուր հնարաւոր է, չափաւորել այդ մրցակցութիւնը։ Անհիմն է երկրորդ հաւաստիացումը, որ իբր թէ մենք ղեկավարվում ենք թշնամական դիտաւորութիւններով դէպի բարեկամ գերմանական ազգը։ Մենք այդպիսի դիտաւորութիւն չունենք ոչ ուղղակի, ոչ էլ կողմնակի կերպով, ոչ ներկայումս, ոչ էլ ապագայում։ Կար գերմանական կառավարութեան անկեղծ յայտարարութիւնը՝ թէ անգլիական կառավարութիւնը ստացաւ նրանից իբր թէ պարզ հաւաստիացում, որ նաւակառուցման պրօգրամի արագացումը չէ մտնում Գերմանիայի դիտաւորութեան մէջ, այդ պատճառով մեր կառավարութեան համար, որը անպայման կերպով վստահացել էր գերմանական կառավարութեան օրինականութեանը, անհնար էր մտցնել մի օրինագիծ, հիմնված այն ենթադրութեան վրա, որ իբր թէ Գերմանիայի յայտարարութիւնը ուշադրութեան արժանի չէ (հաւանութիւն)։ Գերմանիան հասաւ նաւակառուցման ահագին զարգացման և ծովային հսկաների աւելի ևս մեծ զինաւորման։ Բրիտանական կառավարութիւնը աշխատում է փող պահել սօցիալական բարենորոգումների համար, սակայն զինւորական նաւերի կառուցման համար նախահաշւով որոշած գումարը պահանջների մինիմումն է համայնքների ժողովից։ Մնացած վիճաբանութիւնները յետաձգված են։ (Հ. Գ.)

ՍԵՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Բելգրադ, 4 մարտի

Սկուպշչինան ընդունեց օրինագիծ 5,350,000 դինար լրացուցիչ ծախսերի մասին զինաւորութեան համար և 500,000 դինար լրացուցիչ կրեդիտ արտաքին գործերի մինիստրութեան գաղտնի ծախսերի համար։ (Հ. Գ.)

Ցետինէ, 4 մարտի

Աւստրիական մարտանաւերը մի քանի օր առաջ մօտենալով Սպիցցին, երէկ մանեօվրներ արեցին։ Նաւատորմի գալը յուզմունք առաջ բերեց չերնօգօրիական ազգաբնակութեան մէջ։ Կառավարութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել հաւանական միջադէպերի առաջն առնելու նպատակով։ (Հ. Գ.)

Վիէննա, 4 մարտի

Պատգամաւորների պալատ։ Նորակոչ զինւորների թւի վերաբերեալ օրինագծի առաջին ընթերցանութեան ժամանակ Կրամարժ ճառ արտասանեց արտաքին քաղաքական դրութեան մասին։ Կրամարժ ասաց. «Աւստրօ-Ունգարիայի դրութիւնը բարդվում է նրա կառավարութեան սերտ կապի պատճառով Գերմանիայի հետ։ Գոյութիւն ունի մի հայեացք, որի համաձայն գերմանական բարեկամութեան հաւատարմութիւնը այնքան գնահատելի է Աւստրիայի համար, որ պարտաւորեցնում է նրան բարեացակամ լինել դէպի գերմանացիները և ներքին քաղաքականութեան մէջ։ Սակայն հէնց գերմանական բարեկամութեանն է պարտական Աւստրօ-Ունգարիան, որ դրութիւնը սուր կերպարանք է ընդունել, որովհետև Ռուսաստանը և Անգլիան համարում են Աւստրօ-Ունգարիան գերմանական «դրանգ-նախ-օստէնի» ֆօրպօստ։ Աւստրօ-Ունգարիայի դէմ ուղղված հարուածները իսկապէս Գերմանիայի համար են։ Գրգռումը Ռուսաստանում այն երկիւղից է առաջացել, որ Աւստրօ-Ունգարիան արդարացի էր դէպի իր սլաւօնական ժողովուրդները, որ չէր վարում գերմանական կամ մաջարական քաղաքականութիւն։ Եւրօպան և Ռուսաստանը չէին մտածի բողոքել գրաւման և միացման դէմ, եթէ Աւստրօ-Ունգարիան հաւատարիմ լինէր դաշնայական միապետութեան իդէալին, այսինքն ձգտէր երջանիկ դարձնել իր պետութեան մէջ գտնվող ազգերին. եթէ սերբիական կօնֆլիկտ չը լինէր, ինքը Սերբիան կը միանար Աւստրօ-Ունգարիային։ Դրութիւնը այժմ շատ լուրջ է։ Խիստ միջոցների վրա պնդողները գործում են ոչ ազգասիրաբար։ Խօսքը ոչ թէ Սերբիա գրօսանք կատարելու մասին է, այլ եւրօպական կօնֆլիկտի հաւանականութեան մասին, որի մէջ մեծ դեր կը խաղան մեր ազգային և ցեղական հարցերը, որոնք նշանակութիւն ունեն մեր միապետութեան համար։ Չեմ հասկանում, թէ ինչու Աւստրօ-Ունգարիան չէ ուզում իր հիմնական դրութեանը հետևել, որ նա, որպէս զօրեղ պետութիւն, կարող է հանգստութիւն պահպանել։ Այժմ հարց է յարուցվում առևտրական դաշնագրի մասին։ Դրութեանը սուր կերպարանք տալու խորհուրդները ամենևին վատ ծառայութիւն են մատուցանում պետութեանը։ Մենք, սլաւօնները, կամենում ենք, որ անպատրաստութեան նշան չը լինի մեզ մօտ ամենածայրայեղ քայլերի համար խաղաղութիւնը պահպանելու նպատակով։ Մենք կամենում ենք խաղաղութիւնը պահպանել միապետութեան շահերի համար, որովհետև ազնւաբար ցանկանում ենք նրա զօրութիւնը և անկախութիւնը»։ (Բուռն ծափահարութիւններ չեխական նստարանների վրա)։ (Հ. Գ.)

Վիէննա, 4 մարտի

Պատգամաւորների պալատ։ Պարլամենտական ֆրակցիաների ներկայացուցիչների նիստում մինիստր-նախագահ Բիներթը, պատասխանելով կլարիին, յայտնել է, որ արտաքին քաղաքականութեան մասին նախորդ օրվայ իր ասածների վրա ոչինչ աւելացնել չէ կարող։ «Այժմ,—ասաց մինիստր-պրեզիդենտը,—հարցը նրանումն է, որ կրկին պէտք է պատասխանենք սերբիական յայտարարութեանը. այնուհետև միայն դէպքերի զարգացումը տեղի կունենայ»։ Մինիստրը յայտնեց, որ ինքը մտադիր է օգուտ քաղել իւրաքանչիւր առիթից և տեղեկացնել պալատին իրերի դրութեան մասին։ «Չէ կարելի կասկածել,—ասաց նա,—որ դրութիւնը լուրջ է, թէև դեռ ևս կարելի է յոյս ունենալ, որ ամեն ինչ խաղաղ ելք կունենայ»։ (Հ. Գ.)

Բուդապեշտ, 4 մարտի

«Պեստեր Լլօյդը» խօսելով ընդհանուր եւրօպական պատերազմի հնարաւորութեան մասին, գալիս է այն եզրակացութեան, որ պատերազմը՝ ծագելու դէպքում՝ կը չէզոքացվի, որովհետև Ֆրանսիան գիտէ, որ հանրապետական կառավարութեան եղանակը կարող է ոչնչացվել, ինչպէս այն դէպքում, եթէ յաղթող հանդիսանայ իր բանակը, նոյնպէս և պարտվելու դէպքում։ Իր մտաւորով հռչակ վայելող ազգը չի ձեռնարկի այն տեսակ պատերազմի, որը նա իսկապէս մղած կը լինէր Սերբիայի համար։ Անգլիան, իրաւ է, սերտ բարեկամութեամբ է վերաբերվում Ռուսաստանին, սակայն այդ բոլորը պլատօնական է միայն։ Ռուսաստանը աջակցութիւն ցոյց կը տայ Սերբիային հաւանօրէն կամաւորներ միայն ուղարկելով և պաշտօնական պատերազմ մղելով։ Իտալիային մենք չենք կարող դասել մեր թշնամիների շարքը, թէև նա մտադրութիւն չէ ցոյց տալիս, Գերմանիայի նման, յարել այն համաձայնութիւններին, որը նա կայացրել է մեզ հետ։ (Հ. Գ.)

Վիէննա, 4 մարտի

«Կոր. Բիւրօն» տպագրել է Սալօնիկից ուղարկված մի հեռագիր, ուր ասված է, որ Նօվօ-Բազարի սանջակից ստացված տեղեկութիւնների համաձայն, սերբերը շարունակում են սահմանի մօտերքում զինել գիւղացիներին, մատակարարելով նրանց պայթուցիկ ռումբեր։ Սանջակ են ուղարկվում Թիւրքական չորս բատալիօններ ևս։ (Հ. Գ.)

Կեօլն, 4 մարտի

Աւստրիական սպառազինութիւնների առիթով «Կեօլն. Ցայտ.»-ին հաղորդում են Բեռլինից. «Աւստրիայի ձեռք առած ռազմական միջոցները սահմանի վրա սերբիական սպառազինութիւնների հետևանքներն են։ Նախազգուշութեան միջոցներին յարձակողական նպատակ կը տրվեն այն ժամանակ միայն, երբ մնացեալ բոլոր միջոցները անբաւարար կը լինեն Սերբիային հասկացնել տալու դրութեան խոհեմ ըմբռնումը»։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 4 մարտի

«Պետերբուրգի Հեռագրական Գործակալութիւնը» տեղեկութիւն է ստացել, որ արտաքին գործերի մինիստրը յանձնեց աւստրօ-ունգարական դեսպանին ռուսաց կառավարութեան պատասխանը նրա հաղորդագրութեան Կ. Պոլսում աւստրօ-թիւրքական արձանագրութիւնը ստորագրելու մասին բօսնիա-հերցեգօվինեան հարցի վերաբերմամբ։ Ռուսական պատասխանի մէջ մատնացոյց է արված, թէ որպէս արդէն ասված էր ռուսական շրջաբերական հեռագրում 1908 թւի դեկտեմբերի 6-ին, անմիջական համաձայնութիւնը Աւստրօ-Ունգարիայի և Թիւրքիայի միջև չէ արգելում, որ բօսնիա հերցեգօվինեան հարցը առաջարկվի Բեռլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների կօնֆերէնցիային. այդ պատճառով ռուսաց կառավարութիւնը պատրաստ է այժմ և եթ համաձայնվել Աւստրօ-Ունգարիայի և այլ պետութիւնների հետ կօնֆերէնցիա գումարելու վերաբերմամբ, որը պէտք է քննէ թէ բօսնիա-հերցեգօվինեան հարցը և թէ կօնֆերէնցիայի պրօգրամի այլ կէտերը, որոնք արդէն ընդունւած են պետութիւններից։ (Հ. Գ.)

—

Բեռլին, 4 մարտի

Րէյխստագի բիւջէտային մասնաժողովում ծովային ելևմտահաշիւը քննելիս՝ նկատողութեան առնվեց անգլիական համայնքների պալատում տեղի ունեցած երէկվայ վիճաբանութիւնները։ Ծովային մինիստրը շեշտեց, որ Գերմանիան առաջարկութիւն չէ ստացել զինաթափ լինելու մասին։ Ճառախօսի համար հասկանալի չէ, թէ ինչպէս է պատահել, որ անգլիական պարլամենտում ստացվել են անստոյգ թւեր Գերմանիայի շինել տուած նաւերի մասին։ Գերմանիան 1912 թւին կունենայ ոչ թէ 17, այլ 13 դրահանաւեր «Դրէդնօուտ» (տիպի)։ Այնուհետև ծովապետ Տիրպիցը ասաց, որ գերմանական ծովային վարչութիւնը սկսեց գործ ածել ջրասոյզ մակոյկներ այն ժամանակ, երբ հնարաւոր եղաւ այդ մակոյկներին մատակարարել գերմանական պահանջների համար գործածվող շարժիչներով։

«Ֆրանկֆ. Ցայտ.»-ը հաղորդում է, որ երէկվայ յայտնած իր տեղեկութիւնը Պարիզից հիմնված է եղել թիւրիմացութեան վրա։ Հռօմից ստացված հեռագրի համաձայն, խնդիրը վերաբերում է իտալական կառավարութեան ձեռնարկած քայլերին աւստրիական կառավարութեան առաջ, որպէսզի բանակցութիւններ սկսվեն վեհաժողով հրաւիրելու և նրա ծրագիրը մշակելու մասին։ Այդպիսով Իտալիան արդէն դուրս է գալիս այն սպասողական դրութիւնից, որը բռնել էր մինչև օրս։

Ռուսական պատասխանը Բեռլինում երեկոյեան լոյս տեսնող թերթերի կողմից ընդունվում է որպէս ոչ բարեկամական մի ակտ Աւստրիայի նկատմամբ։ «Բօրզէն-Կուրիէրը» ցաւակցութիւն է յայտնում Ռուսաստանի գործելու եղանակի առիթով, որի շնորհիւ նորից պէտք է յետաձգվի անորոշ ժամանակով վիճելի հարցերի վերջնական լուծումը։

«Ֆօսսիշէ-Ցայտունգը» ասում է. «Ռուսաստանը կանգնեց Սերբիայի տեսակէտի վրա և պաշտպանում է սերբիական պահանջները»։ «Կրէյ. Ցայտ.»-ը յայտնում է, որ ռուսական պատասխանը յայտարարելուց յետոյ այլ ևս չէ կարելի կասկածել, որ Աւստրիայի վերջին քայլերը Բէլգրադում անհետևանք կանցնեն, որովհետև այնտեղ հաստատապէս հաւատացած են, որ Ռուսաստանը իրանց աջակցելու է։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 4 մարտի

«Թայմսին» հեռագրում են (Տօկիօյից ?), որ մարտի 3-ին արտաքին գործերի մինիստրը յայտնել է պարլամենտում, որ կառավարութիւնը ընդունում է ֆակումինեան երկաթուղային գծի կարևոր նշանակութիւնը հարաւային-մանջուրական երկաթուղու աջող գործունէութեան համար։ Կառավարութիւնը վճռել է չը հրաժարվել Եապօնիայի օրինական իրաւունքներից։ (Հ. Գ.)

—

Բագու, 4 մարտի

Կալանաւորված են երկու դրամաշորթներ, որոնք մահվան սպառնալիքներով պահանջում էին Բիսեվի մեքենայական գործարանի տիրօջից 5000 րուբլի։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 4 մարտի

Պրէմիէր - մինիստր Ստօլիպինի առողջական դրութիւնը. տաքութիւնը մարտի 2-ի երեկոյեան 37,1. զգացվում էր մի փոքր թուլութիւն. զարկերակը 62. սրտի գործունէութիւնը գոհացուցիչ է։ Մարտի լոյս 3-ի գիշերը քունը հանգիստ էր. տաքութիւնը առաւօտեան 36,5. զարկերակը 62, կանօնաւոր. մնում է փոքր թուլութեան զգացմունք։ Թոքերի բորբոքումը լուծվում է։ Ընդհանուր դրութիւնը գոհացուցիչ է։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 4 մարտի

Ստատս-սեկրետար Ստօլիպինի առողջութեան ընդհանուր դրութիւնը մարտի լոյս 4-ի գիշերը եղել է բաւարար։ (Հ. Գ.)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պօլիս, 4 մարտի

Ներկայ ֆինանսական տարվայ բիւջէտում, որ ներկայացված է պարլամենտին, ընդհանուր ծախքեր հաշւված են 29,100,322 ֆունտ, մուտք՝ 25,294,151 ֆունտ, դեֆիցիտ՝ 3,806,171 ֆունտ։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 4 մարտի

«Շուրայի-Իմմէթը», պարսկական գործերին նուիրած իր մի յօդուածում, նախատեսնելով օտարերկրեայ միջամտութեան անխուսափելիութիւնը, յանձնարարում է կառավարութեանը աշխատել, որպէսզի Թիւրքիան ևս պարսկական հարցում իրաւունք ունենայ մուտք ունենալու անգլօ-ռուսական համաձայնութեան մէջ։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Վերջերս լուրեր և տեղեկութիւններ էին ստացվում, թէ Պարսկաստանի հայերին ջարդի վտանգ է սպառնում այն դէպքում, եթէ կառավարչական զօրքերը յաղթող հանդիսանան, որովհետև շահը սաստիկ զայրացած լինելով հայերի դէմ, որ սրանք աջակցում են յեղափոխականներին և սահմանադրականներին, խէթ աչքով է նայում նրանց վրա։ Այս լուրը հաւանականութիւն էր ստանում և նրանով, որ շահը մերժել էր ընդունելու հայոց առաջնորդ Այվազեան արքեպիսկոպոսին։ Այդ առիթով մենք ստացանք վերջերս տեղեկութիւն Թեհրանից— մի քիչ ուշ, պօստի յապաղման պատճառով—որ ցոյց է տալիս, թէ այդ լուրերը անհիմն են։ Դեռ յունվարի 20-ին, շահը Թեհրանում ունկնդրութեան է ընդունել Այվազեան արքեպիսկոպոսին, որ իր հետ իբրև թարգման ունեցել է պ. Յովսէփ Միրզայեանցին, «Բաղը-Շահ» պալատում։ Ընդունելութիւնը շատ սիրալիր է եղել և տևել է մի ժամից աւելի։ Մահմէդ-Ալի շահը յայտնել է թուրքերէն, թէ ինքն երբէք կասկած չէ ունեցել հայ ժողովրդի հաւատարմութեան վրա, թէև զանազան նահանգներից բազմաթիւ հեռագիրներ են գալիս այն մտքով, թէ հայերը ըմբոստութեան և անհաւատարմութեան նշաններ են տալիս։ «Հաւատ չընծայելով այդ լուրերին,— ասաց շահը,—ես ամենևին չեմ փոխել դէպի հայերն ունեցած իմ համակրական վերաբերմունքը և խոստանում եմ հեռագրական խիստ հրամաններ ուղարկել ամեն տեղ, որ հայերին պաշտպանութիւն ցոյց տրվի»։ Առաջնորդ Այվազեան արքեպիսկոպոսն այն միտքն յայտնեց, որ հայ անհատների գործածները չը պէտք է վերագրել ամբողջ հայ ժողովրդին, որ միշտ հաւատարիմ է եղել պարսից գահին և աշխատել է նպաստել Իրանի բարգաւաճման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Որքա՜ն գեղեցիկ յոյսեր էին դրված երբեմն ուսանող երիտասարդութեան վրա, որքա՜ն շատ ակնկալութիւններ ունէր հասարակութիւնը նրանից, ինչպիսի՜ գաղափարական ու պատկառելի հմայք էր շաղկապված «ուսանող» անուան հետ։

Իսկ այսօր…

Թուցէ անտեղի էին ու չափազանցված այդ բոլոր յոյսերն ու ակնկալութիւնները, ինչպէս շատերն են այսօր պնդում։ Բայց մի բան կասկածից դուրս է, որ ուսանողութիւնը պէտք է բարձր կանգնած լինի իր ժամանակի հասարակական միջավայրից և առաջդիմական-գաղափարական ձգտումների անձնուէր դրօշակակիրը հանդիսանայ։

Դժբաղդաբար, այժմ այդ չենք տեսնում. արդի խառնափնթոր իրականութեան մէջ իր դրական, գաղափարական վերաբերմունքով չէ որ նա իր վրա է ուշադրութիւն գրաւում կեանքի զանազան արտայայտութիւնների ու հասարակական կարևոր խնդիրների նկատմամբ, այլ ընդհանուր առմամբ իր բացասական կողմերով, որոնք հիասթափութիւն են առաջ բերում ժողովրդի մէջ։

Ո՞վ կարող էր սպասել, որ այսօր ուսանողութեան շարքերից էլ կը լսվի այնպիսի խայտառակ, աննպատակ մի վերաբերմունք, որով դիմաւորեցին Օդեսսայի սօւիգնիկ ուսանողները կանանց սեռի ուսանող երիտասարդութեան ներկայացուցիչներին՝ դիմաւորելով նրանց հանդէս գալը իրանց շարքերում՝ գիտութեան տաճարի մէջ, բացագանչելով.

— Ճանապարհ տուէք անասնուհիներին։

Ինչ քաղաքական դաւանանքի ուզում է թող հետևի ուսանողը, դա անհատական համոզմունքի գործ է։ Կարող ենք ուրախանալ, եթէ նա համապատասխանում է ժողովրդի իսկական շահերին, եթէ նա մաքուր է, վսեմ և զերծ վատ յատկութիւններից։

Եւ, ընդհակառակը, կարող ենք ցաւել, եթէ նա միանգամայն վնասակար ուղղութեամբ է ընթանում։

Ինչ էլ լինի, բայց նա ըմբռնել վայելչութեան տարրական պահանջները պարտաւոր է, մանաւանդ իր ինտելիգենտութեամբ պարտաւոր է օրինակ դառնալ ուրիշների համար։

Այդ տեսակէտից միանգամայն հասկանալի է այն զայրոյթը, որ առաջացրեց սօւիգնիկ-ուսանողների այդ անպատկառ բացագանչութիւնը միւս ուսանողների շրջանում և քիչ մնաց, որ արիւնահեղ ընդհարման պատճառ դառնար։

Մի կողմից լսվում են բողոքներ այդ սօւիգնիկային գործելակերպի դէմ, իսկ միւս կողմից՝ ուղղվում են ատրճանակներ։

Մարդ դժուարանում է հաւատալ, որ այդ բոլորը կատարվում է համալսարանի պատերի մէջ, այլ ոչ փողոցում։

Գեներալ Տօլմաչեվը իրաւ որ կարող է հրճուել, տեսնելով իր ջանքերը լիովին պսակված։

Ի՛նչ փոյթ նրան՝ թէ ամեն մի այդպիսի տգեղ երևոյթ կարող է անպատւաբեր լինել ռուս ժողովրդի անուան համար, թէ կարող է խախտել այն վառ յոյսերը, որ տածել ու դեռ ևս տածում են հասարակական առողջ ու գիտակից խաւերը ուսանողութեան նկատմամբ։

Բայց ի՞նչ պիտի անէ ինքը ուսանողութիւնը։

Աշխատակից

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆՈՒ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Աշուղ Ջիւանու մահվան առիթով զանազան տեղերից շարունակում են ստացվել ցաւակցական նամակներ և հեռագիրներ։

Էջմիածնի ճեմարանի ուսուցչական խմբից ստացվել է հետևեալ հեռագիրը.

«Արտայայտում ենք մեր խորին ցաւակցութիւնը ժողովրդական տաղանդաւոր երգչի՝ Ջիւանու մահվան առիթով»։

Մինաս Բերբերեան, Երուանդ վարդապետ, Մանուկ Աբեղեան, Ստեփան Կանայեան, Խաչիկ Սամուէլեան, Տէր-Առաքելեան, Միսակ Խոստիկեան, Կարապետ Տէրեան, Յարութիւն Պետրոսեան, Նիկողայոս Բիւրդեան, Մեսրովբ Աբովեան, Կարապետ Քոչարեան։

◆ Գ. Լեռնեանի գեղարուեստական կուրսերի աշակերտ-աշակերտուհիները մարտի 1-ին հետևեալ որոշումն են կայացրել. «Անուանի ժողովրդական երգիչ աշուղ Ջիւանու յիշատակը յարգելու համար, մենք սուղ միջոցներից փոխանակ նրա դագաղի վրա վաղանցուկ և ապարդիւն մի պսակ դնելու, յանձնեցինք «Գեղարուեստ» և «Գիւղատնտես» հանդէսների խմբագրութիւններին տարեկան բաժանորդավճարները, որպէսզի մի-մի օրինակ ուղարկվի այդ թերթերից հայկական գիւղական մի համայնքի՝ անփոխարինելի աշուղի անունով»։

◆ Ցաւակցական նամակներից մի քանիսը բաւականին ուշագրաւ են այն տեսակէտից, որ նրանց մէջ ոչ միայն շօշափվում են Ջիւանու կորստի նշանակութիւնը, այլ և առհասարակ հասարակական գործչի և թէ մշակի իսկական գնահատութեան մասին արտայայտվում են բնորոշ խորհրդածութիւններ։

Այդպիսիներից կարևոր ենք համարում առաջ բերել հետևեալ կտորը, ուր ասվում է, որ Ջիւանու կորուստը ազգային է։

«Եթէ իր հայրենիքը և համակրողները,— ասում է Բաթումի նամակագիր Շահ-Արմէնը,—մինչև իր մահվան նախօրեակին չը յիշեցին իրան, այսօր նրա դագաղի վրա ողբացողներ շատ կը գտնվեն։ Ա՜խ, երանի թէ, գոնէ, այդ ափսոսանքը հասարակութեան սրտից՝ անկեղծ լինէր. դա ապացոյց կը լինէր, որ հանրային մշակը գէթ իր մահից յետոյ է յարգվում ու յիշվում, այդ էլ մի վերապրումի կեանք է և թւում է աւելի թանգագին՝ քան առօրեայ կեանքի կեղծ ու պատիր շրջանքը։ Հանրային գործիչը մեռնելուց յետոյ է, որ իսկապէս պիտի ապրի։

«Թող ոչ մի հանրային մշակ չը ցանկայ և չը սպասէ իր կենդանութեան օրով գնահատվելու և փառաբանվելու. զուր սպասելիք և անգոյն, շատ աղօտ պիտի լինէր այդ գնահատութիւնը։ Պէտք է աշխատել, որ ամեն մշակ իր գնահատումի և վերապրումի պատւանդանը ժողովրդի հոգու և սրտի խորքում քանդակէ. այնտեղ նրա փառաբանութիւնը յաւիտենական պիտի լինի, իսկ նիւթական սպասելիքը գործչի իդէալից շատ ստոր է։

«Այժմ մնում է հարց տալ—Ջիւանին ժողովրդի սրտում պատրաստե՞լ էր, արդեօք, այդ վերապրումի գանձը։ Ես պիտի պատասխանեմ—այո՛։

«Այժմ ժողովրդին է մնում օգտվել այդ գանձից և ապրեցնել Ջիւանուն»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ախալցխա, 1 մարտի

Այսօր երկրորդ կիրակին է, որ երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը մի քանի կարևոր հարցերի համար ծխական ժողով է նշանակում, բայց ծխականների օրինական թիւ չը հաւաքվելու պատճառով ժողով չէ կայանում։ Հասարակութեան այդ անտարբերութիւնը միանգամայն դատապարտելի է։ Երբ առաջին կիրակի ժողով չը կայացաւ, այդ կարող է ունենալ իր որոշ պատճառաբանութիւնը, այն՝ որ ընդհանրապէս դժուար են հաւաքվում այդ ժողովի համար օրինական թիւ կազմող 500 ծխականներ. բայց ի՞նչ պատճառաբանութիւն կարող է լինել երկրորդ ժողովը չը կայանալու ժամանակ, երբ ընդամենը 170 հոգի էր հարկաւոր, որ ժողովը վաւերական համարվէր, մի թիւ, որը շատ չէ Ախալցխայի պէս մի հայաշատ քաղաքի համար. այսօր հաւաքվել էր ընդամենը մօտ 30 հոգի, մի թիւ, որ միայն նախատինք կարող է բերել մեզ… Այսպէս է մեր ժողովուրդը. երբ մի հարց է վճռվում և իրան ձայնի իրաւունք չէ տրվում՝ գիտէ բողոքել, իսկ երբ ձայնի իրաւունք են տալիս՝ չը գիտէ օգտվել։

Երրորդ ժողովի համար թոյլտւութիւն կը խնդրվի հոգևոր վարչութիւնից և այդ դէպքում ինչքան էլ մարդ հաւաքվելու լինի, ժողովը օրինական կը համարվի։

3 մարտի

Առաջին ծնողական ժողովից յետոյ մի ամբողջ ամիս է անցել և երկրորդ ծնողական ժողովի մասին ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն չէ լսվում, չը նայած այն հանգամանքին, որ երկու շաբաթ յետոյ պէտք է տեղի ունենար երկրորդ ծնողական ժողովը։ Ցանկալի էր, որ դաստիարակութիւնները բաժանվէին այնպիսի ուսուցիչների մէջ, որոնք կարող են ժամանակին հասցնել, այլապէս այդ լաւ սկսած գործը կարող է իր իսկական նպատակին չը հասնել։

Անցեալ կիրակի, փետրվարի 22-ին, տեղիս դրամատիկ սիրողների ընկ. վարչութիւնը, բաղկացած 8 հոգուց, գտնվելով ամենադրամատիկ դրութեան մէջ, այն, որ չէր կարողանում ներկայացումներ կազմակերպել, ընդհ. ժողովին ներկայացրեց իր հրաժարականը։ Հրաւիրված վարչութեան անդամներից երկուսը—բժ. Այվազեան և Աբրահամ Անիսոնեան—հրաժարվեցին միայն խաթեր համար, որ վարչութեան միւս անդամների դրութիւնը շատ անելանելի չը լինի. առաջինը՝ վարչութեան անդամ ընտրվելուց անմիջապէս յետոյ՝ Վըբօրգեան կոչի պատճառով բանտ նստեց, որ և մասնակից լինել չէր կարող վարչութեան անգործունէութեան, իսկ երկրորդը՝ ինչպէս ինքն էր ասում, չէր կարող գործ անել այնպիսի ընկերների հետ, որոնք ժողովների ժամանակ միայն «այո» ասել գիտեն։

Երևի շուտով տեղի կունենայ վարչութեան նոր անդամների ընտրութիւն. ցանկալի էր, որ ընկերութեան անդամները ցոյց տային աչալուրջ վերաբերմունք և բեմական գործին քիչ թէ շատ ծանօթ մարդիկ ընտրէին։

Lego

—

Լագօդաղ, 3 մարտի

Կ. Հ. Բ. Ը. տեղական ճիւղի վարչութիւնը, համաձայն խորհրդից՝ ստացված հրահանգների, ձեռնարկեց Լագօդաղում հիմնել վարկային ընկերութիւն (кредитное товарищество)։ Խնդիրքը 45 ստորագրութեամբ արդէն ուղարկված է պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքին։ Բանկի հիմնական դրամագլուխը լինելու է 6000 րուբլի, որպիսի գումարը խնդրատուները խնդրում են պետական բանկին տալ իրանց փոխարինաբար։ Ինչպէս յայտնի է, 1905 թ. օրէնքով պետական բանկը բաց է թողնում մանր վարկային ընկերութիւններին հիմնական դրամագլուխ կազմելու համար գումարներ 13 տարի ժամանակով՝ տարեկան 6 %։

Որովհետև Լագօդաղի հայ բնակիչները շատ սակաւաթիւ են, և Կ. Հ. Բ. Ընկերութիւնն անկարող է տարեկան 150—200 րուբ. աչքի ընկնող դեր կատարել, վարչութիւնը դիմեց խորհրդին տալ իրան փոխարինաբար 350 րուբլի մի դեսեատին ծխախոտ ցանելու համար 10 ամիս ժամանակով։ Եթէ բերքը լաւ է լինում, 1 դեսեատինից ստացվում է օգուտ 150—200 րուբլի։ Վարչութիւնը կամենում է գնել նաև փեթակներ և պարապել մեղուաբուծութեամբ յօգուտ ընկերութեան։ Յոյս ունենք, որ խորհուրդը կը յարգէ այս օգտաւէտ միջնորդութիւնը։

N. N.

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԹՆՈԼՈՐՏԻՑ

—

Մեր սինօդականները

Երբ տեսնում ենք այն սխրագործութիւնները, որոնք այսօր տեղի են ունենում Էջմիածնի պատերում տեղապահ Սուրէնեանի ու սրա «անխորհուրդ խորհրդականների» ձեռքով, ակամայից հարց ենք տալիս՝ ի՞նչ է անում հապա Էջմիածնի ամենաբարձր օրինական-վարչական ատեանը՝ սինօդը։ Սրա պատասխանը միայն դառն հեգնական ժպիտ կարող է լինել, որ շատ բան կը բացատրի, թէ այդ սխրանքների հեղինակները ովքե՛ր են և ուր են բազմած։ Այսօրվայ մեր սինօդականները, որոնցից շատերը միայն տեղապահ Սուրէնեանի օրով և միջնորդութեամբ արժանացան իրանց այդ կոչմանը, ի բաց առեալ 2—3 անձերի, ամբողջովին հերոսներն են ու հեղինակները այն դրութեան, այն տրամադրութեան, որ ներկայ ժամանակում տիրում է Էջմիածնի պատերում։ Տեղապահ Սուրէնեանի այդ «անխորհուրդ խորհրդականներն են», որ իրանց շահատակութիւնները ձգտում են միշտ սինօդով անցկացնել, որպէսզի ազդեցիկ ու հրամայողական գոյն տան իրանց այդ ձեռնարկութիւններին։ Շատ իրաւունքներ, որոնք միայն կաթողիկոսի լիազօրութեանն են պատկանում, սինօդի նորաթուխ անդամները այդ նպատակով ուզուրպացիայի են ենթարկում։ Այդ ուզուրպատօրական ձգտումներից մէկն էլ այն է, որ ճեմարանը ամբողջովին ենթակայ դարձնեն սինօդի իրաւասութեան, և այդպիսով կը գիրանայ այն կռիւը, այն ինտրիգների իրականացումը, որը նրանք գիշեր-ցերեկ կռում-կոփում են դպրոցական այդ ապաբաղդ հիմնարկութեան դէմ։ Ոտնատակ անելով Պօլօժենիէի 1208-րդ յօդուածը, ուր յիշվում է, որ Էջմիածնի հոգևոր ճեմարանը գտնվում է հայոց վեհափառ պատրիարք կաթողիկոսի գլխաւոր իշխանութեան ներքոյ, մեր տխրահռչակ հերոսները զանազան ֆօկուսների են դիմում իրանց թաքփաքային հաշիւները տեսնելու ճեմարանի ներկայ վարիչների վերաբերմամբ։ Իսկ Սուրէնեան անուանեալ տեղապահը սրանց կամերտօնի ձայնին է միայն ուշադիր։ Միմիայն տեղապահ Սուրէնեանի օրով կարելի էր սպասել, որ Գէորգեան ճեմարանի նախահաշիւը հակառակ մինչև օրս եղած սովորութեան քննվէր ու հաստատվէր սինօդում. միայն ներկայ սինօդականների կուրութեան աստիճանին հասած ոխակալութեանը պիտի վերագրել այն որոշումը, որ նրանք արել են երկու շաբաթ սրանից առաջ, այն է առաջարկել տեղապահին, որ սա անմիջապէս արձակէ պ. Մինաս Բերբերեանին ճեմարանի տեսչութիւնից։ Սինօդական օրագրով կազմված այդ որոշումը դեռ ևս գտնվում է պ. պրօկուրօրի ձեռքում և յայտնի չէ, թէ ինչ ընթացք կը տայ նա գործին։

Ահա թէ ուր են գնում մոլեգնած կրքերը. իսկ բազմաթիւ գործեր, ժողովրդական ու հասարակական զանազան խնդիրներ, հարցեր, բողոքներ, որոնցից յիշենք միայն Հին-Ղրիմի հասարակութեան կռիւը Եղիշէ վարդ. Մուրադեանի ապօրէն արարքների դէմ, մնում են կամ մահուդի տակ, կամ ձգձգվելով երկար ամիսների ընթացքում կողմնապահութեամբ վճռվում ի վնաս ժողովրդի շահերի։ Ո՞ր մէկը ասենք, ո՞ր մէկը գրենք ցոյց տալու մեր սինօդականների գործունէութեան գոհարները. բաւական է որ տեսնում ենք, թէ ինչ անկման է հասել այսօրվայ Էջմիածինը։ Միջնադարեան հալածանքներ, եզուիտական լրտեսութիւններ, րաֆինացրած ինտրիգներ—ահա այն զէնքերը, որոնք «անխորհուրդ խորհրդականների» բարոյական-մտաւոր հայեացքներին են համապատասխանում և բնորոշում նրանց վարչական ընդունակութիւնները։ Զանազան խղճալի աստուածաբաններ, ողորմելի մագիստրոսներ ու անկոչ իրաւաբաններ, որոնք այսօր յոխորտում են իրանց սինօդական կոչումով, վարդապետներ, որոնք միայն իրանց անձնական հաշիւների, հիւանդոտ «ես»-ի ու փառքի համար կարողանում են շահագործել մի վարչական հիմնարկութիւն, պիտի վաղ թէ ուշ պատասխանատուութեան ենթարկվեն հասարակական դատարանի առաջ, իսկ այժմ նրանք իրանց սխրանքների փառքով արբեցած դառնում են ամեն ինչ՝ թէ ժողովուրդ, թէ հասարակութիւն և թէ ապագայ պատմութեան դատաւճիռը։ Եւ առաջին պատասխանատուն կը լինի տեղապահ Սուրէնեանը. այն ժամանակ էլ արդեօք կը դիմէ նա իր սիրելի «անխորհուրդ խորհրդականներին»։

Նիմանդ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

—

Պետական Դումայի մարտի 2-ի երեկոյեան նիստում և մարտի 3-ի առաւօտեան և երեկոյեան նիստերում քննվեցին մի քանի հարցեր, որոնց մէջ աչքի են ընկնում հետևեալները. 1) Դատարանների և տեղական դատարանների վերակազմութեան հարցը։ Արդարադատութեան մինիստրը այն միտքն յայտնեց, որ 1864 թ. նոյեմբերի 20-ի դատաստանական օրէնսգիրքը հանդիսանում է մի գեղարուեստական շինութիւն, որի ընդհանուր ներդաշնակութիւնը խախտված է մի քանի կարկատաններով։ Նոր շինութեան հիմքը ձգելիս, առաջին տեղը պէտք է տալ տեղական դատարանին։ «Հաստատեցէք Ռուսաստանում տեղական դատարան, բայց ոչ էժանագին, որովհետև էժանագինը համանիշ է վատ դատարանի»։

Մի պատգամաւոր (Գեգեչկօրի) ասաց. «Ռուսաստանում, ուր լայն կերպով տիրում է բռնապետական անիշխանութիւնը, թագաւորում է կոպիտ կամայականութիւնը, վախմիստրների անձնական հայեցողութիւնը, ուր կառավարչական իշխանութեան բոլոր օրգանների ամբողջ գործունէութիւնը և եռանդը ուղղված են՝ կռւելու ժողովրդի և նրա արդար ձգտումների դէմ, դատարանը պէտք է դառնայ և դարձել է զէնք ստրկացնելու ժողովրդի լաւագոյն գիտակից և ստեղծագործ ոյժերը»։

Մի այլ պատգամաւոր (Լեախնեցկի) դատափետեց արդարադատութեան մինիստրի գործունէութիւնը, յայտնելով, որ վերջին ժամանակը Ռուսաստանում տիրապետել է լիակատար անդատաստանութիւն. դատաւորները արդարացնում են կամ ենթարկում են չնչին պատիժների պօգրօմներ սարքողներին և ժողովրդական գոյքը յափշտակող բարձրաստիճան պաշտօնեաներին, բայց միևնոյն ժամանակ անխնայ պատժում են գիւղացիներին, բանւորներին։ Արդարադատութեան վերականգնումը հնարաւոր է զինուորական դատարանների վերացմամբ։

Պատգամաւոր Աջէմեանը ցոյց տուեց 1864 թ. դատաստանագրքի համար ութսունական թւականների նորմուծութիւնները, այնպէս որ այժմ արդարադատութեան տաճարին վտանգ է սպառնում։

Արդարադատութեան մինիստր Շչէգլօվիտօվը պատասխանելով այդ 4 հռետորներին, այն միտքն է յայտնում, որ նրանց յարձակումները իր համար սարսափելի չեն, որովհետև յարձակումը միայն այն ժամանակ է սարսափելի, երբ նա սպառազինված է լաւ զէնքերով և գտնվում է փորձված ռազմագէտների ձեռքում: Ապա պատասխանելով լեհ պատգամաւոր Դիմշայի խօսքերին, որ ասել էր, թէ դատաւորները պէտք է անպատճառ իմանան տեղական լեզուները և թէ Լեհաստանում լեհերը չը պէտք է զրկվեն դատաւորական պաշտօնից, մինիստրը ասաց, թէ ճիշդ չէ այն միտքը, որ Լեհաստանում լեհ դատաւորները ցանկալի են և անհրաժեշտ: Լեհաստանը և նրա պատմութիւնը շատ խրատողական է: «Իր կուլտուրական և տնտեսական զարգացմամբ նա պարտական է գլխաւորապէս վերջին քառասնամեայ շրջանին, որ սկսվեց անմոռանալի Ազատարար Կայսրի ռէֆորմներից յետոյ: Լեհաստանը երբէք չէ հասել այնպիսի զարգացման, որին նա հասել է այժմ, և շնորհակալութեան փոխարէն ռուս մարդկանց, մենք միմիայն յարձակումներ ենք լսում լեհերից (ծափահարութիւններ աջակողմից) դատարանի վրա, այսինքն պետական մի հիմնարկութեան վրա, ուր քաղաքականութիւնը կատարելապէս անթոյլատրելի է (ծիծաղ ձախակողմից. ձայներ աջակողմից՝ «կամաց»): Վերադառնալով լեհական ծագում ունեցող անձերից բաղկացած դատարանի հարցին, պէտք է ձեզ ասեմ, որ Լեհական Թագաւորութեան նահանգների ներկայ դրութիւնը լաւագոյն պատասխան կարող է ծառայել այն բանի, որ գործնականապէս բոլորովին անիրագործելի է այն, ինչ մեզ ըստ երևոյթին այնպէս տեսական հիմունքներով ապացուցանում էր Դումայի անդամ Դիմշան:

«Լեհական Թագաւորութիւնը ունի դատարան, որ գմինային է կոչվում: Այդ դատարանը կազմվում է բացառապէս լեհական ծագում ունեցող անձերից: Այդ դատարանը չը կարողացաւ արդարադատութիւնը իր ձեռքում պահել ոչ թէ ազատագրական, ինչպէս նրան՝ անուանում են, այլ աւերող շարժման ժամանակ. այժմ կամենում են, որ ընդհանուր դատարաններն էլ, որոնք բարեբաղդաբար չեն գտնվում նրանց ձեռքում, անցնեն այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք տատանման րոպէին չը կարողացան պահել դատարանը պատշաճաւոր բարձրութեան վրա (աջակողմից բացագանչութիւններ՝ «բրաւօ». ծափահարութիւններ): Այդ հիւանդութիւնը դեռ չէ անցել. համարեա իւրաքանչիւր շաբաթ ես զեկուցումներ եմ ստանում առանձին գմինային դատարանների մասին, որոնք հրաժարվում են դատաւորական երդում տալ ռուսերէն լեզուով: Գործնական կողմից ամենամեծ սխալ կը լինէր ներկայումս բանալ դատարանի դռները լեհական ծագում ունեցող անձանց համար: Նրանք կը տանեն այդ գործը իրանց սեպարատիստական ուղղութեամբ (բացագանչութիւններ աջակողմից՝ «հիանալի է»): Ռուսաստանի կայսրութեան միւս մասերում դատարանի դռները բացված են լեհերի համար. մենք կանգնած ենք հաւասար իրաւունքների հողի վրա, որի մասին խօսում էր Դումայի անդամ Դիմշան: Որպէս ներկայացուցիչ այժմեան կառավարութեան,—ասաց մինիստրը,—ես կարծում եմ, որ մենք բարոյական իրաւունք չունենք տալ Լեհական Թագաւորութեանը այն, որը կարող է ծառայել օրինապահութիւնը խախտելուն նրա մէջ և գլխաւորապէս այն կապը, անխզելի կապը խախտելուն, որ պէտք է գոյութիւն ունենայ Լեհաստանի և ռուսաց կայսրութեան միւս մասերի մէջ»:

Մինիստրից յետոյ խօսեց Ծուբինսկին, որ յայտնեց, թէ՝ արդարադատութեան դրութիւնը երկրում ոչ մի պարծենալիք չէ ներկայացնում: Եթէ դատարանը սիրելի չէ ձախակողմեան նստարաններին, աւելի վատթար կը լինի, եթէ նրանք նրան սիրէին: Պատգամաւոր Զամիսլովսկին կարծիք յայտնեց, որ արդարադատութեան դէմ յարձակվող հռետորների ճառերը նպատակ ունեն վարկաբեկել ժողովրդի աչքում դատարանը, ռուսական արդարադատութիւնը, որպէսզի կարողանան ճանապարհ հարթել յեղափոխութեան համար: Եթէ Լեհաստանում պէտք է տեղական լեհ լեզուն իմացող դատաւորներ լինեն, այն ժամանակ, այդ երկրի հրէաներից և պէտք է նշանակել դատաւորներ:

Ի վերջոյ Դուման քուէարկութեամբ մերժում է աշխատաւորների և կադետների առաջարկած բանաձևները և ընդունում է բիւջէտային յանձնաժողովի բանաձևը, որին համաձայն էր և կառավարութիւնը: Հաստատվում է մինիստրութեան նախահաշիւը:

Երկրորդ հարցը՝ քննվում է բանտային գործը: Երրորդ հարցը՝ կռիւը արբեցողութեան դէմ: (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ինչպէս մեզ հաղորդում են Էջմիածնից, մինչև այսօր ոչ սինօդը, ոչ տեղապահը չեն ստացել պաշտօնական որևէ տեղեկութիւն ամենայն հայոց կաթողիկոսի հաստատութեան մասին: Հաւանօրէն, մօտերքս կը հրատարակվի կայսերական հրովարտակը, որից յետոյ միայն սինօդը կուղարկի հրաւիրակներ Կ. Պոլիս՝ հրաւիրելու Իզմիրլեան սրբազանին՝ գալ օծվել կաթողիկոս: Օծումից յետոյ միայն խօսք կը լինի նոր կաթողիկոսի Պետերբուրգ գնալու մասին:

◆ Թիֆլիսի Հանգանակիչ Մասնաժողովը, ինչպէս հաղորդեցինք անցեալ անգամ, որոշել է միջնորդել կաթողիկոսական տեղապահի միջոցով Փոխարքայի առաջ թոյլատրելու Մասնաժողովին շարունակել իր գործունէութիւնը և ժողովարարութիւնը դարձեալ մի տարի: Վերջին նիստում, որ կայացաւ երկուշաբթի, մարտի 2-ին, Մասնաժողովն որոշեց յանձնել պ.պ. Ալ. Մէլիք-Ազարեանցին, Ալ. Քալանթարին և Սամսոն Յարութիւնեանին ներկայանալ Փոխարքային և տալ կարևոր բացատրութիւնները:

◆ Ինչպէս յայտնի է, վերջերս Մողնու եկեղեցու ծխականները ընտրեցին Գայիանեան օրիորդաց դպրոցի համար նոր հոգաբարձութիւն, ի տեղի հրաժարված հոգաբարձուներ՝ Հ. Առաքելեանի, Պետրոս Քալանթարեանի և Լևոն Քալանթարեանի: Թեմիս առաջնորդը հաստատելով նորընտիր հոգաբարձուներին՝ առաջարկել է գումարել ծխական ժողով մի քանի կարևոր հարցերի քննութեան համար: Ընտրված և հաստատված հոգաբարձուներից մինը՝ պ. Եսայի Դօլուխանեանը և երեցփոխ Բ. Տէր-Յակոբեանը հրաժարված լինելով, շուտով պէտք է կատարվի նոր ընտրութիւն մի հոգաբարձուի, 2 փոխ-անդամի ու երեցփոխի:

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն հաստատել է Թիֆլիսում բացվելիք կանանց բարձր կուրսերի կանոնները: Կուրսերը գտնվելու են լուսաւորութեան մինիստրութեան հսկողութեան տակ և նրանց բացումը ենթադրվում է աշնանը:

◆ Զուբալովի անուան ժողովրդական տան օծումը և բացումը ենթադրվում է կատարել մարտի 15-ին: Այդ պատճառով յիշեալ տան մէջ գումարվելիք IX համառուսական Ջրանցքային համաժողովի այդ օրվայ նիստը նշանակվում է Արտիստական Ընկերութեան դահլիճի մէջ:

◆ Ժողովրդական համալսարանի վարչութիւնը յանձնել է իր անդամներ՝ Հ. Առաքելեանին և Բ. Մկրտումեանին կազմակերպել ռուսաց գրող Գոգոլի ծննդեան հարիւրամեակին, մարտի 22-ին, հայերէն դասախօսութիւն և ընթերցումներ Զուբալովի ժողովրդական տան մէջ՝ ռուսերէն և վրացերէն դասախօսութիւնների հետ միասին:

◆ Չորեքշաբթի, մարտի 11-ին, կայանալու է Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր ի միջի այլոց պէտք է քննվի անդամավճարը 10 ր. մինչև 5 ր. իջեցնելու խնդիրը:

◆ Կովկասեան շերամապահական կայարանում եռանդուն քննութիւններ են կատարվում շերամի սերմի վերաբերեալ: Այս տարի քննութեան է ներկայացված անհամեմատ շատ սերմ, քան անցեալ տարի:

◆ Քաղաքագլխի պաշտօնակատարը թոյլտուութիւն է խնդրում պատշաճաւոր իշխանութիւնից, քաղաքային դումայի քննութեան նիւթ դարձնել տէրրորի և շանտաժի դէմ կռուելը:

◆ Կովկասեան Գիւղատնտեսակ. Ընկերութեան գործադիր մարմինը նորերս ստացել է անասուններին կերակրելու զանազան տեսակ խոտի՝ շվեդական և կարմիր առոյտի (երեքնուկի) ու եոնջայի սերմեր: Վերջինս ստացված է Ֆրանսիայից, իսկ երեքնուկը Ռուսաստանի Խարկովի ու Օրլովի նահանգական զեմստվօյից:

◆ Մեզ հաղորդում են, որ ճապոնական կլուբի հերթական երեկոյթը տեղի կունենայ հետևեալ շաբաթ օրը, մարտի 4-ին և Ճութլինգ կը կարդայ պատերազմական ընկերութիւնների մասին զեկուցում:

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, կը կայանայ Կովկասեան Իրաւագիտական Ընկերութեան նիստը, շրջանային դատարանի շէնութեան մէջ: Նիստում քննվելու են պ. պ. Ձմշկեանի և Գվազավայի զեկուցումները և կարդացվելու է պ. Կուսիկեանի զեկուցումը՝ «Չը կայացած աճուրդի հետևանքները»:

◆ Կիրակի, մարտի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին, Զուբալովի ժողովրդական տան մէջ, ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերութեան նախաձեռնութեամբ կը կայանայ Վ. Վ. Սիվկովի դասախօսութիւնը ռուսերէն լեզուով «Աբրահամ Լինկօլն և ստրկավաճառութեան ջնջումը Ամերիկայում» բնաբանով: Տոմսակների գինը 10 և 5 կոպէկ է:

◆ Արդէն վերջնականապէս պարզվել է, որ այս տարի շերամի սերմի գները չափազանց ցածր են: Թիւրքիայից ներմուծված սերմերը վաճառվում են մսխալը 30 կոպէկով և մինչև իսկ աւելի պակաս գնով:

◆ Թիֆլիսում նախաձեռնութեամբ մի քանի հողատէրերի՝ իշխ. Ջանդիերիի, պ. Կավրիևի և այլոց՝ կազմակերպվում է ոչխարաբուծական ընկերութիւն, փայերով: Ընկերութեան կանոնադրութիւնը արդէն մշակված է և այս օրերս կը ներկայացվի պատշաճաւոր իշխանութեան ի հաստատութիւն:

◆ Շնորհակալութեամբ ստացանք Նիւ-Եօրկից, դօքտոր Մ. Սմբատ Գաբրիէլեանից՝ «Հայկական ճգնաժամն և վերածնութիւնը» հեղինակութիւնը, երկրորդ հրատարակութիւն (1909 թ.), որին կը նուիրենք մի առանձին յօդուած:

◆ Մարտի 4-ին, ցերեկվայ ժամը 3-ին, 2-րդ քաղաքամասի շրջանում կատարված խուզարկութիւնների ժամանակ կալանաւորված են 11 հոգի, որոնք անցագիրներ և որոշ պարապմունքներ չունեն: Նոյն օրը Դիդուբէի, Ելիզաւետինսկայա և Շերեմետիէվսկայա փողոցներում կալանաւորված են 7 հոգի, որոնք նոյնպէս չունեն որոշ պարապմունքներ: Կալանաւորվածների անձնաւորութիւնների մասին հարկաւոր տեղեկութիւններ են հաւաքվում:

◆ Սպանդանոցներ կառուցող մասնագէտ ինժեներ պ. Պօդերնեան, որը կառավարում է Մօսկվայի քաղաքային սպանդանոցը, հրաւիրված էր Թիֆլիս նոր սպանդանոցի մակարդակը վերջնականապէս կազմելու: Պ. Պօդերնեան հաղորդում է քաղաքային վարչութեանը, որ նա կարող է Թիֆլիս գալ մօտաւորապէս մարտի 15-ից մինչև ապրիլի 3-ը, 7 օրով, և վարձատրութիւն է պահանջում մի հազար րուբլի:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ձեռնարկ տարրական տրամաբանութեան, հոգեբանութեան և բանահիւսութեան: Ի պէտս հայոց ազգային վարժարանների: Կազմեց Հ. Առաքելեան: Թիֆլիս, 1907, գինն է 50 կ., 258 էջ:

Մեր մանկավարժական գրականութիւնը շատ աղքատ է բանահիւսութեան տեսութեան ձեռնարկներով: Ոչ միայն աշակերտին, այլ և ամեն մի քիչ թէ շատ կրթված մարդուն անհրաժեշտ է գիտենալ՝ թէ ինչ ձևերով է մարդ բանաւոր կամ գրաւոր արտայայտում իր մտաւոր և հոգեկան աշխարհը: Այս բանի գիտենալը շատ կարևոր է մանաւանդ՝ երբ մարդ ցանկանում է մի բան շարադրել կամ գրել: Ահա այս պահանջի գոհացման համար է պ. Հ. Առաքելեանը կազմել բանահիւսութեան տեսութեան ձեռնարկը:

Նախ քան մտքի և հոգու աշխարհների արտայայտման ձևերի արուեստի կամ բանահիւսութեան տեսութեան ուսումնասիրումը, անհրաժեշտ է առաջ գիտենալ մարդու մտաւոր և հոգեկան աշխարհների էութիւնը, բովանդակութիւնն ու օրէնքները: Այս պատճառով էլ յօրինողը նախապէս համառօտակի տալիս է սկզբում տրամաբանութեան և հոգեբանութեան սկզբնական տարրերը:

Տրամաբանութեան (լօգիկա) և հոգեբանութեան որոշումները, իբրև գիտութիւնների, տրված են շատ սահմանափակ: Առաջինը բացի «մտածողութեան կանոնաւոր ձևի» (էջ 15), այլ և մտածողութեան օրէնքների գիտութիւնն է, իսկ երկրորդի՝ այսինքն հոգեբանութեան օբեկտը միայն «մտածողութեան բնական օրէնքները» չեն կազմում:

Հոգևոր առարկաների որոշման մէջ (էջ 8) պէտք է ասել, ոչ թէ «գոյութիւն ունեն», այլ մարդիկ ընդունում են, որ հոգևոր առարկաները գոյութիւն ունեն:

Մակդիրների (էպիտէտների) օրինակների հետ (էջ 92) պէտք է յիշատակել նաև պատմականները՝ Մեծն Վարդան, Դաւիթ Անյաղթ, Մեծն Պետրոս և այլն:

Вѣщій բառը պէտք է թարգմանել իմաստուն և ոչ կախարդ (էջ 170), ուրեմն պէտք է լինի՝ Երգ Իմաստուն Օլէգի մասին (Пѣснь о Вѣщемъ Олегѣ):

Ժողովրդական երգերի ռուս բանաստեղծներին Թելլին բաց է թողնված ամենայայտնին՝ Կոլցովը:

Անհրաժեշտ է մանաւանդ դասագրքերում խուսափել վրիպակներից, որոնք տեղ-տեղ մինչև իսկ անհասկանալի են դարձնում միտքը: Օրինակ՝ Vini (էջ 90), փոխանակ՝ Veni, հեղլ ? (էջ 203), ակատակային ? (էջ 219) և այլն:

222-րդ էջի վրա տպված է՝ «սուբէկտիվ». համաձայն պարբերութեան իմաստի պէտք է լինի՝ «օբէկտիվ»: Վիկտոր Հիւգոյի Իննըսուն երեքը (էջ 178), պէտք է լինի Իննըսուն երեքերորդ տարին:

Չը նայելով վերոյիշեալ երկրորդական նշանակութիւն ունեցող թերութիւններին, ընդհանրապէս ձեռնարկը կազմված է շատ աջող և, իբրև օժանդակիչ դասագիրք, մեծապէս դիւրացնելու է հայոց լեզուի և գրականութեան դասատուներին բանահիւսութեան դասաւանդութիւնը, իսկ աշակերտներին՝ այդ առարկայի ուսումնասիրութիւնը: Ա. Նազարէթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 1 մարտի

Բոլորովին հանգիստ թողնելով «Նոր կեանք», «Մեր Ձայնը», «Խաթարալա» և «Հովիւ» շաբաթաթերթերին, որոնց ընթացքը բնորոշ արտայայտիչն է իրանց անուան, ես կը պատասխանեմ միայն «Բազմավէպ» ամսագրի խմբագրութեան, որ Շ. Կուրղինեանը իր գրքով երևան է եկել 1908 թւին, այն-ինչ իմ ոտանաւորը («Սաբրերի գօշից»), որից կտորներ է բերում խմբագրութիւնը հաստատելու համար իբրև հետևողութիւն, տպված է դեռ 1906 թւի Ս. Թառայեանի հրատարակած «Ընկեր» շաբաթաթերթի № 3-ում: Ա. Ջանեան

—

Մեղրի, 13 փետրվարի

Ինչպէս միշտ, այս տարի էլ Վարդանանց տօնի առիթով եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ: Ներկայ էին ուսուցիչները, ուսուցչուհին իրանց աշակերտ-աշակերտուհիներով. ապա բոլոր ժողովուրդը դիմեց հանդէսին ուսումնարանի բակում: Աշակերտ-աշակերտուհիները կարդացին ոտանաւորներ, ուսուցիչներից պ. Կալենդերեան պատմեց մի առ մի Վարդանանց պատերազմի նշանակութիւնը և այլն: Աւագ-ուսուցիչ պ. Միլօյեանը բացատրեց թէ ինչ է ուսումնարանը և ինչ անգնահատելի օգուտներ է տալիս նա: Նոյնպէս աւելացրեց, որ անհրաժեշտ է թատրօնը, որը ուսումնարան է հասակաւորների համար, որպէս դպրոցը սաների համար:

Կոչ արեց օգնութեան ձեռք կարկառել նորընտիր կաթողիկոս Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանի սրտաճմլիկ կոչի համաձայն Զէյթունի սովատանջ հայ ժողովրդի անտանելի և նիւթական անելանելի սուղ վիճակի վերաբերմամբ:

Վարդանանց տօնի առիթով շտապեցի մի հանգանակութիւն բաց անել տեղիս յարգելի հասարակութեան շրջանում, որը մասնակցեց հանգանակութեան:

Այսօր մի փոխանակագրով փոխադրում եմ խմբագրութեանդ 35 րուբլի 95 կոպէկ և խնդրում եմ ի միամտութիւն յարգելի նուիրատուների հրատարակել ձեր լրագրի առաջիկայ համարներից մէկում նրանց անուն ու ազգանունները:

Հասարակական դրամարկղից 10 րուբլի, Խ. Շահսուարեան 1 ր. 50 կ., Յ. Աւագեան, Գ. Իսրայէլեան, Յ. Մալումեան, Վաչեան, Մ. Տիրացուեան, Ա. Գաբրիէլեան, Տէր-Գրիգորեան, Դ. Տէր-Զաքարեան, Մ. Վաչեան, Ա. Մելիք-Ասլանեան, Տօշեան, Ա. Մկրտչեան 1-ական րուբլի: Յ. Ջանեան, Ս. Անանեան, Յ. Մալումեան, Գ. Խարմանեան, Ա. Ազատեան, Գ. Վաչեան, Գ. Միլօյեան, Գ. Կալենդերեան, Պ. Միքայէլեան, Մ. Ուհանեան, Ս. Սարգսեան, օր. Վարդուհի, Բ. Տէր-Մարկոսեան, Տ. Տէր-Ազարեան 50-ական կոպէկ: Ն. Խաչիկեան, Կ. Շահեան 40-ական կոպէկ: Ա. Զաքարեան, Ս. Գաբրիէլեան, Տ. Հայրապետեան, Մ. Մարտիրոսեան, Մ. Տէր-Ծատուրեան, Ն. Խարատեան, Դ. Յովհաննէսեան 30-ական կոպէկ: Յ. Թումանեան, Ա. Տէր-Գրիգորեան և մի ոմն 25-ական կոպէկ: Յ. Զարչեան, Մ. Մամիջանեան, Ս. Վաչեան, Վ. Զարգարեան, Ս. Սիմէօնեան, Մխիթար Տ.-Նազարեան, Դ. Փարսադանեան, Ա. Ուհանեան 20-ական կոպէկ: Ընդամենը 35 ր. 95 կոպէկ: Դաւիթ Վաչեանց

ԴԻՄՈՒՄՆ

Էքսպրօպրիացիաներ, յափշտակութիւններ, սպանութիւններ, շանտաժներ:

Ահա մեր օրերի սարսափելի չարիքը:

Օր չէ անցնում, որ մենք վկայ չը լինենք նոր և նոր սպանութիւնների ու բռնութիւնների:

Այդ չարիքը վերջին ժամանակներս ժողովրդական աղէտի բնաւորութիւն է ստացել: Նրանից հաւասարապէս տուժում են ինչպէս հասարակութեան ունևոր դասերը, նոյնպէս և սահմանափակ միջոցների տէր մարդիկ և մինչև իսկ լիովին աղքատները: Եթէ հարուստները վնասվում են իրանց ստացուածքով և յաճախ էլ կեանքով, ազգաբնակութեան աղքատ մասը պակաս չէ վնասվում այն ռեպրեսալիաներից, որոնք հետզհետէ աւելի ու աւելի են սաստկանում ամեն մի յանցանքի շնորհիւ և բոլորովին անհնար են դարձնում փոքր ի շատէ խաղաղ կուլտուրական կեանքը:

Ճնշող ու ծանր է դարձել ապրելը: Սարսափած, վերջին տարիների անկարգութիւններից նեղված հասարակական միտքը բոլորովին անզգայացած է: Բնակիչները կորցրել են ինքնապաշտպանութեան ընդունակութիւնը: Մինչև անգամ քաղաքային ինքնավարութիւնը, որի վրա պարտք է ընկնում հոգ տանել պաշտպանելու քաղաքացիների շահերը, ոչինչ չէ անում յիշեալ չարիքի դէմ կռուելու համար:

Բայց եթէ ամեն կողմից ահաբեկված հասարակութիւնը հարկադրված է լռութիւն պահպանելու, եթէ քաղաքային գործիչները իրանց կոչման բարձրութեան վրա կանգնած չեն հանդիսանում, գոնէ մամուլը չէ կարող, նա չը պէտք է լռէ ազգաբնակութեան համար մի այսպիսի ծանր վայրկեանում: Ժողովրդական աղէտների տարիներում նա միշտ հաւատարիմ էր մնում իր բարձր միսսիային. ժողովրդական աղէտների տարիներում նա միշտ հասարակական մտքի զարթեցնողն էր լինում և ղեկավարը: Նա այժմ էլ պէտք է իր վրա առնէ յաւիտենական զանգի դերը, կոչ անէ հասարակական նիրհող ույժերին, զարթեցնէ քաղաքացիական քնած զգացմունքները և այդպիսով նպաստէ մեր հասարակական մթնոլորտի պարզվելուն:

Կանգ չառնելով այն հարցի առաջ—ինչպէս բուժել աղէտը—մամուլը ստիպված է հաստատել այն տխուր երևոյթը, որ յիշեալ չարիքի դէմ կռուելու համար չը կայ ույժ իրան հասարակութիւնից դուրս:

Հասարակութեան փրկութիւնը իրա հասարակութեան մէջ է, նրա ինքնագործունէութեան զարգացման և արտայայտութեան մէջ, մարդասպանների, յափշտակիչների և շանտաժիստների դէմ մղված կռուի մէջ: Մենք լաւ օրինակներ ունենք այդ մասին: Վրաստանի արևմտեան մասը՝ Գուրիան, ինչպէս և Երևանի և Գանձակի նահանգների և Կարսի շրջանների մի քանի գաւառները բացառապէս՝ շնորհիւ ինքնագործունէութեան՝ կարողացան անդամալուծել իրանց ոճրագործ անդամների գործունէութիւնը: Ազգաբնակութիւնը կռիւ յայտարարեց շանտաժիստներին և էքսպրօպրիատորներին և վերջինները ստիպվեցին զիջել ժողովրդի միահամուռ գրոհին: Մեզ մօտ, դժբաղդաբար, այդպիսի բան չը կայ: Եւ եթէ ում և իցէ մօտ գոյութիւն ունի ռօմանտիքական վերաբերմունք դէպի մարդասպանները և էքսպրօպրիատորները, որի մասին այնքան յաճախ խօսում է աջակողմեան մամուլը, մենք վճռապէս յայտարարում ենք, որ այդպիսի վերաբերմունք դէպի յանցաւորները արդիւնք է թերամտութեան և անհրաժեշտ ենք համարում վերջնականապէս ցրել նրան: Մենք կոչ ենք անում քաղաքային հասարակական ինքնավարութեանը վերցնել իր վրա նախաձեռնութիւն՝ կռուի միջոցներ մշակել մարդասպանների, շանտաժիստների և էքսպրօպրիատորների դէմ, որոնք սպանում են զինուորներին և խաղաղ բնակիչներին:

Անհաշտ, անխնայ կռիւ մարդասպանների, շանտաժիստների և էքսպրօպրիատորների դէմ:

Այդպէս պէտք է լինի ամբողջ ազգաբնակութեան նշանաբանը:

Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ *)

Ղուկասեանի այս մրցանակաբաշխութիւնը նոր երևոյթ չէ մեր կեանքում և ոչ էլ վերջինը կարող է լինել, որովհետև առհասարակ մի որևէ օգտաւէտ ձեռնարկութիւն, եթէ միայն այն ձգտում է իր գծած նպատակի իրագործման, ունենում է բազմաթիւ հետևողներ, տալով փառաւոր արդիւնքներ: Մեր փոքրիկ գրականութեան համար, որը ունի շատ քիչ նուիրված սպասաւորներ, անշուշտ, գրական այսպիսի մրցանակաբաշխութիւնները կարող են ամենամեծ ծառայութիւնը մատուցանել, խթան լինել նրա զարգացման, առաջ քաշելով և հնարաւորութիւն տալով շատ տաղանդաւոր անհատներին այդ ասպարիզում գործելու, աշխատելու: Բայց դժբաղդաբար այդ գործի գլուխ կանգնածների՝ երբեմն պատահական անձնաւորութիւնների թերուսութեան կամ, զուգէ, խնամիական կապերի շնորհիւ այդ գեղեցիկ խրախուսանքը յաճախ կորցնում է իր հրապոյրը, նսեմացնում արժէքը և այդպիսով երես դարձնել տալիս հեղինակաւոր գրողներին, ասպարէզը թողնելով գրչակներին, թերուսներին:

Մինչև օրս Իզմիրեան մրցանակով չը պսակվեցին այնպիսի գրուածներ, որ կարողանան պատիւ բերել թէկուզ մեր գրականութեանը, կամ որոշ տեղ բռնել ու նշանակութիւն ունենալ գիտական աշխարհում: Գրեթէ բոլորն էլ խեղճ ու կրակ երկասիրութիւններ են, անաշխատանք ժողովածուներ, քննադատական ռառանցանքներ և կամ կօմպիլեացիաներ: Եւ ցաւալին այն է, որ կարծես թէ դիտմամբ, համեմատաբար լաւ գրուածները զանց են առնվել և վարձատրվել անհամ ու անպէտք աշխատութիւնները:

Թէ ինչպիսի հասկացողութեան տէր մարդիկ են Իզմիրեան մրցանակի գլուխ կանգնողները, գիտական ինչ հոտառութիւն ունեն, բաւական է մի երկու դէպք յիշել, երբ միաժամանակ միևնոյն բովանդակութեամբ աշխատութիւններ են ներկայացվել և վարձատրվել է անպէտքը, ոչնչութիւն պարունակողը: Հայ լրագրութեան պատմութիւն ուղարկեցին Վիեննայից և Կովկասից, և չը նայած որ առաջինը լաւ և հիմնաւոր աշխատութիւն է, որին գրականութեամբ պարապողները, աշխատողները հարկաւոր դէպքում դիմում են, առաջինը մերժվում է և վարձատրվում երկրորդը: Աւելի վատ և խայտառակ է Հիւնքեարպէյէնտեանի գործը. սրա հետ Վիեննայի մխիթարեան հ. Տէր-Միքելեանը, որը մեր մէջ գիտական լեզուաբանութեան առաջին հիմունքը հաստատեց, ուղարկել էր «Հնդ-եւրոպական նախալեզու» աշխատութիւնը, որը փառաւորապէս մերժվում է, չը նայած որ շատ ընտիր աշխատութիւն է և Կ. Պոլսի հայագէտների համար յետոյ դարձած դաստիարակ, որովհետև շատերը եւրոպական գիտական լեզուներից օգտվել չը կարողանալով, այդ գրքին են դիմում յաճախ և փառաւորապէս օգտվելով իբրև իրանց սեփականութիւնը բաշխում աջ ու ձախ: Իսկ Հիւնքեարպէյէնտեանի աշխատութիւնը, որ տպագրելուց յետոյ մի քանի անգամ քննադատվեց և միշտ էլ միաձայն վկայութեամբ ճանաչվեց բոլորովին անպէտք աշխատանք, արժանացաւ առաջին մրցանակի, ստացաւ ամբողջ գումարը, որ երբէք մինչև այսօր էլ ոչ մէկին չէ տրված: Չը մոռանանք յիշել և այն, որ նոյնպէս մերժեցին յայտնի բանասէր հայագէտ Տաշեանի «Առաքելոց վարդապետութիւն» աշխատութիւնը... և այսպէս էլ միւսների նկատմամբ: Այդ պատճառով է, որ վերջերս Իզմիրեան մրցանակաբաշխութեամբ հետաքրքրվում են միայն անյայտ հեղինակներ, ստանալով խղճուկ գումարներ: Կտակի պայմանով մրցանակի համար նշանակված է տարեկան 540 րուբլի, որը ինքն ըստ ինքեան մի չնչին վարձատրութիւն պիտի լինի թէկուզ 100 էջից բաղկացած մի աշխատութեան համար, որովհետև այդ գումարը հազիւ թէ կարողանայ լրացնել, մանաւանդ ներկայ հանգամանքներում, տպագրութեան ծախսը, բայց երևակայեցէք, որ այդ չնչին, ողորմելի գումարը երբեմն բաժանվում է 3—6 հոգու, որ, ի հարկէ, ողորմելի պատողութեան արդիւնք է:

(Կը շարունակվի)

---

*) Ի նկատի ունենալով, որ առաջիկայ ապրիլի 7-ին կայանալու է մրցանակաբաշխութեան հանդէսը, կարևոր ենք համարում տալ ներկայ յօդուածը: Ծ. Խ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Լոնդոն, 5 մարտ (ն. տ.)

Լորդ Նիւթըն, քաղաքական գործերու մէջ ծանօթ անգլիացի մը, ճիշդ Թիւրքիա, Մակեդոնիա և Սերբիա այցելութենէ մը վերադառնալով, հետեւեալ կարծիքները կը յայտնէ այդ երկիրներուն վերաբերմամբ։

«Ամեն բանէ առաջ պէտք է խոստովանիլ թէ խիստ անորոշ է Թիւրքիոյ ապագան,— կըսէ ան։— Մեծ սխալ մը պիտի ըլլայ ենթադրել թէ ամեն ինչ ամենայն հարթութեամբ կընթանայ հոն՝ որովհետև պարլամենտական կարգեր հաստատեցին անոնք։

«Ամենուն ալ յայտնի ըլլալու է, որ Թիւրքիոյ կացութիւնը շատ դժուարին է։ Դրամի մեծ կարօտութիւն կայ։ Վարչական փորձառութիւն ունեցող մարդոց մեծ պէտք կայ։ Գրեթէ բոլորն ալ համաձայն են որ՝ սուլթանին անհատական գերիշխանութեան վերադարձը հարցէն դուրս է։ Որքան որ կարելի է դատել, նա այլևս ոևէ ազդեցութիւն չունի քաղաքականութեան վրայ։ Պարզ սահմանադրական վեհապետի մը դերն է իրը։

«Ամեն դասակարգի Թիւրքերն ալ երախտագիտութիւն կը յայտնեն տագնապի միջոցին մեր կատարած անշահախնդիր դերի մասին։ Յուսալի է, որ արտաքին դժուարութիւնները ժամանակաւորապէս յղկուին Աւստրիոյ և Բուլգարիոյ հետ. սակայն Բուլգարիոյ վերաբերմամբ հարցը միշտ անձկալի երևոյթ մը կը կրէ և դժուարութիւնները նորէն չկրկնուելու ապահովութիւն մը չկայ»։

Այցելելով Տրամա, Մակեդոնիոյ մասին կըսէ.

«Գործերուն տեղեակներ վախ կը յայտնեն, որ գարնան խռովութիւնները վերսկսին։ Բոլորն ալ այն կարծիքն ունին, որ յեղափոխական գունդեր իրենց գործողութիւնները մօտ ժամանակէն նորէն ձեռք առնեն»։

Իսկ Սերբիոյ մասին հետեւեալը կը յայտնէ.

«Քանի մը օր առաջ թողուցի Բելգրադ։ Ձեզ հաւատար թէ սերբիացիք պատերազմ կուզեն։ Դրամ չունին. շատ քիչ մարդ ունին. իրենց կազմակերպութիւնը ողբալիօրէն աղքատ է։ Տագնապի ամենէ կրիտիքական րոպէին իսկ միմիայն 30,000 հոգի կրցան դուրս բերել։ Բացարձակ անհեթեթութիւն մըն է Աւստրիոյ կողմէ, առաջնակարգ զինուորական ույժ մը, առարկել թէ սպառնացում կըլլայ իրեն Սերբիոյ նման փոքր, տկար, չորրորդ կարգի երկրէ մը։

«Ահագին վտանգ կայ նաև Մոնթէնէգրոյի մէջ։ Բայց, հոդ ևս աւստրիացիք բաւականաչափ ուժեղ են՝ քիչ մը վեհանձնութիւն ցոյց տալու այդպիսի փոքր երկրի մը»։

Ու Լորդ Նիւթըն կը փակէ իր տեսակցութիւնը, յայտարարելով որ այս բոլոր դժուարութեանց ծագման պատճառներուն համար շնորհակալ ըլլալու ենք բարօն ֆօն Էրենտալի, Աւստրիոյ արտաքին գործոց մինիստրին…

Եթէ Ֆրանց Յովսէփ տարի մը ևս ապրելու առիթն ունենայ, Էրենտալի՝ իշխանի տիտղոսին բարձրացումը ապահովուած է յաջորդ հանդիսաւոր պարագայի մը։ Այս տարի խոհեմութիւնն էր միայն, որ ետ պահեց կայսրը այդ փառքին արժանացնել իր նորածին Բիսմարկը՝ ի նշան երախտագիտութեան՝ անոր կատարած ծառայութեան փոխարէն։

Երկու խոշոր ու բարեբեր նահանգներ աւարի տանել, բովանդակ Եւրոպան եռացման վիճակի հասցնել, աջ ու ձախ ահ ու սարսափ ստեղծել… Ասոնք բոլորը արժանի են վարձատրութեան և Էրենտալ այդ արժանիքէն զրկուելու վախ չունի։

—

Անցեալ օր ձեռք առնելով երեկոյեան առաջնակարգ պահպանողական թերթը, «Globe», հանդիպեցայ հետեւեալին, գրուած իր Կահիրէի թղթակցէն.

«Մեծն Բրիտանիոյ՝ Նեղոսի երկրին մէջ կատարած գործին մէկ երևելի օժանդակը, զօրավար սըր Էդուարդ Ջօնրապ փաշա, ճիշդ վախճանեցաւ, և օղակ մը ևս կտրուեցաւ անցեալի ու Անգլիոյ գրաւման յուզիչ օրերուն միջև։ Այդ գրաւման պահուն սըր Էդուարդ Ջօնրապ, առաջին կարգի զինուորական մը, Անգլիոյ ամենէ վստահելի տեղապահներէն էր։ Իր ծառայութիւնները խիստ անգին էին, ու երբ խդիվին պատերազմական ենթաքարտուղար կարգուեցաւ 1894-ին, զօրավար Ջօնրապ փաշա վարձատրուեցաւ K. C. M. G.-ով մը *)։ Եգիպտոսի ամենէ կարող վարչապետին՝ Նուպար փաշայի և իր լաւագոյն ելմտագէտին՝ Տիգրան փաշայի նման, սըր Էդուարդ Ջօնրապ եգիպտացի չէր երբեք, այլ ազնուական ընտանիքէ հայ մը։ Կանուխէն անգլիական զօրքին ներքև ծառայեց և 1884-ին լորդ Վուլզլիի հետ էր, նախ անոր սպայախումբին մէջ և ապա իբրև անոր aide-de-camp-ը։

«1878-ին, Բուլգարիոյ մէջ եգիպտական գունդին հրամանատարը Ջօնրապ փաշա էր։ Թէպէտև հիմնովին քաջածանօթ եւրոպական զինավարժութեանց, ան մինչև վերջ ալ հաստատ հաւատացող մը մնաց բրիտանական դպրոցին ու հայրենիքէն խդիվին բանակը եկող շատ մը երիտասարդ սպաներ փաշան իրենց լաւագոյն բարեկամը գտած էին Սիրդարէ վերջ»։

Կարծես մեր ցեղային փառքին զարկ տալու կանխամտածումով, քանի մը օր վերջ ալ պատկառելի «Times»-ի մահացուցակին մէջ կը կարդայի հետեւեալ հակիրճ մահազդը։

«Մեր Բուխարէստի թղթակիցը կը հեռագրէ մահը գերապատիւ Գէորգեանի, Ռումանիոյ իշխանիկ մը, որ անցեալները գահաժառանգ իշխանին ու իշխանուհիին մանուկը մկրտեց»։

Թէև երկրորդին մէջ հայ ըլլալու յիշատակում մը չկայ, սակայն անունը բաւական վստահելի գրաւական է,— եթէ նոյնիսկ հինգերորդ նախապապէ ալ մնացած ըլլայ այդ։

Ու երբ այս մեծ մարդոց անունները կարդացի, կուրծքս ուռիլ սկսաւ հպարտութենով. քիչ մնաց որ հայ թագաւոր մը ունենալու անհրաժեշտութեան վրայ յօդուած մը գրէի, բայց…

Այդ դերը ուրիշին կը թողում։

Մինաս Ցոլակ

---

*) Զինուորական բարձր նշան մըն է սա։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԷՑ

—

Հայ կարօտեալները և կառավարութիւնը.— Ինչպէս յայտնի է, ասկէ քանի մը ամիս առաջ կառավարութիւնը 2000 ոսկիի նպաստի գումար մը ղրկած էր ազգ. պատրիարքարան, հայ կարօտ գաղթականներուն բաշխուելու և իրենց հայրենիքը ղրկուելու համար 15—20 օրուան մէջ։ Այդ զեկոյցը կրկին անգամ եղած էր, սակայն վերջերս ստուգուած ըլլալով որ այդ գաղթականները չեն ղրկուած իրենց հայրենիքը և տակաւին մեծ գումարի մը պէտք կայ, անոնց կարօտութիւնը դարմանելու համար, Ներքին գործոց մինիստրութենէն քաղաքապետութեան գրուեցաւ այդ մասին։ Ներքին գործոց մինիստրութիւնը իր թէզքերէով կը հարցնէ, թէ մինչև հիմա ինչու հայ գաղթականները չեն ղրկուած, և թէ տրըուած նպաստի գումարին որքանը բաշխուած է և ինչ եղանակով. նոյնպէս կը հարցնէ թէ որքան դրամ մնացած է այդ գումարէն, գաղթականներէն քանի հոգի Կ. Պոլիս կը գտնուին և առաքման ու ապրուստի հայթայթման համար ինչքան դրամի պէտք կայ։

Կալկաթայի հայերը.— Վերջերս Լինգայի պարսկ. կայս. մաքսատան տնօրէն Մովսէս խան Խաչատուրեան, որ Պոլիս եկած և պատրիարք հօր ներկայացած էր, այս անգամ նորին ամենապատուութեան յանձնարարութեան վրայ Կալկաթայի հայերէն նպաստահաւաք յանձնաժողով մը կազմեր է պ. Յարութիւն Ստեփաննոսեանի նախագահութեամբ որ առայժմ հաւաքեր է 300 անգլ. ոսկի և մօտ օրէն պիտի ղրկէ պատրիարքարան։ Սրբազան պատրիարքը շնորհակալութեան գիր մը ղրկեց Մովսէս խանի և օրհնութեան կոնդակ մը՝ նոյն յանձնաժողովին։

Սուլթանը՝ 5 ոսկի, Եուսուֆ-Իզզէդդին՝ 20 ոսկի հայոց Աղքատախնամին ի նպաստ.— Պեբայի Աղքատախնամը ի նպաստ թաղին աղքատներուն ասկէ առաջ որոշած էր նուագահանդէս մը տալ և մասնախումբ մը ընտրած էր, որուն նախագահութիւնը, դիմումի մը վրայ, ընդունած էր կայս. իշխան Եուսուֆ Իզզէդդին։ Վերջերս Ինիօն Ֆրանսէզի մէջ տեղի ունեցաւ այս նուագահանդէսը. իշխան Իզզէդդին էֆէնդիի կողմէ ներկայ էր կայս. իշխան Մէջիդ էֆ.։ Այս առթիւ սուլթանը, որուն ևս դիմում եղած էր, հինգ ոսկի նուէր ղրկած, իսկ իշխան Իզզէդդին իր ծանօթ հայասիրութեամբը և ազնուութեամբը քսան ոսկի ղրկած էր։ Նուագահանդէսին ներկայ էին բազմաթիւ կայս. իշխաններ և ընտրուած դասակարգը Պեբայի միջազգային Հայ-Լայֆին։ Սակայն դիտել կը տրուի թէ ինչու մասնախումբին անդամները և կամ անոնք որ յայտագիրը պատրաստեցին, ամեն բան նկատողութեան առած էին, բացի հայերէն որևէ երգէ կամ արտասանութենէ մը։ Ինչու այդ զանցառութիւնը, երբ հայոց Աղքատախնամին ի նպաստ է տրուած ցերեկոյթը. շատ ծիծաղելի պիտի ըլլայ առարկելը թէ միջազգային բազմութեան մը ներկայութեանը, ուր քիչ էր հայերու թիւը, պատշաճ չէր հայերէն որևէ բան արտասանել տալ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

4 մարտի

ՍՏՕԿՀՈԼՄ։ Երեք մինիստրների հրաժարականները ընդունված են։ Նրանց փոխարէն նշանակված են երկրագործութեան մինիստր՝ պատգամաւոր Նիլսընդեր, ինժեներ, մինիստր առանց պորտֆելի՝ բժիշկ Լինդստրօմ, հոգևոր գործերի դեպարտամենտի դիւանատան տեսուչ։ Արտաքին գործերի մինիստրի պարտականութիւնները ժամանակաւորապէս յանձնված է մինիստր-նախագահին։

ՎԱՐՇԱՎԱ։ Մարտի 3-ին պօլիտեխնիկական ինստիտուտում դասախօսութեան ժամանակ մեխանիկ-ուսանողները աղմուկ բարձրացրին և քիմիական օբստրուկցիա սարքեցին՝ ստիպելով նրանց ընդհատել դասախօսութիւնը։ Ոստիկանութիւնը կալանաւորել է 40 հոգու։ Մնացեալ դասախօսութիւնները տեղի ունեցան։

ՕԴԵՍՍԱ։ Երէկ և այսօր համալսարանում դասախօսութիւնները անցնում են հանգիստ։ Բաւականաչափ մեծ թւով ուսանողներ ներկայ են լինում դասախօսութիւններին։

ԼՈՆԴՈՆ։ Պալաս-Թատրոնի շուրջը, ուր ի պատիւ ռուս նաւազների ներկայացում էր տրվում, ժողովրդի ահագին բազմութիւն էր հաւաքվել։ Թատրոնը զարդարված է անգլիական և ռուսական դրօշակներով, ներսից՝ ծաղիկներով, օթեակները դրօշակներով։ Մի շարք օթեակներ դրված են դեսպանութեան տրամադրութեան տակ։ Ռուսաց օֆիցէրներին ու նաւազներին բաժանված են իբրև յիշատակ ռուսերէն և անգլերէն լեզուներով տպագրված պրօգրամները, անգլիական թագաւորի և ռուսաց կայսրի նկարներով զարդարված։

ՊԱՐԻԶ։ Կլեմանսօն խորհրդակցել է հասարակական աշխատանքների մինիստրի ու պօստային և հեռագրական մինիստր Բարդուի հետ։ Գլխաւոր հեռագրական աշխատանքները բոլորովին կանգ են առել։ Մտադրութիւն կայ զինուորական հեռագրական ծառայողներ հրաւիրել հեռագրական հաղորդակցութիւնը պահպանելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դումայի անձի անձեռնմխելիութեան մասնաժողովը ընդունել է բացառիկ դրութիւնների օրինագծի 27-րդ յօդուածը, որ պարունակում է իր մէջ յանցանքների մի ամբողջ ցուցակ, որոնց համար, բացառիկ դրութեան մէջ դրված տեղերում, ենթարկվում են զինուորական և զինուորական - նահանգական դատարանին, գործադրելով նրանց վերաբերմամբ զինուորական ժամանակի համար սահմանված գործավարութեան եղանակ, նաև քաղաքացիական իշխանութեան մէջ ծառայող այն անձինք, որոնք չեն պատկանում ոչ ցամաքային զօրքին և ոչ էլ նաւատորմին։

Բիւջէտային մասնաժողովը, աննշան փոփոխութիւններով, ընդունել է արտիլերիական գլխաւոր վարչութեան և գլխաւոր շտաբի նախահաշիւները։

Պետական պաշտպանութեան մասնաժողովը այն կարծիքն է յայտնել, որ Սախալին կղզու վրա աւելի նպատակայարմար է զինուորական նահանգապետի փոխարէն քաղաքացիական նահանգապետի պաշտօն հաստատել։

Ընթացիկ օրվայ մէջ խօլերայով հիւանդացել են 5 հոգի։

Նորին Մեծութեանը ներկայանալու բաղդ ունեցաւ «Նօվօէ Վրէմիայի» հրատարակիչ Սուվօրինը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Արտասահման մեկնելու պատճառով, հիւանդների ընդունելութիւնը ընդհատված է։
(օ. մ.) 50—48

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—59

ՀՐԱՒԷՐ
Ըստ յանձնարարութեան Թեմակալ բարձըր սրբազան առաջնորդի ամսիս 1-ին Կաթուղիկէ ս. Աստուածածնի (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցում նշանակված ծխականների ժողովը չը կայանալով երեցփոխան և հաշուետեսներ ընտրելու և տնտեսական մի քանի խնդիրների վերաբերութեամբ խորհրդակցելու համար, սրանով հրաւիրում եմ երրորդ անգամ յիշեալ եկեղեցու մեծ. պ. պ. ծխականներին, որ մարտի 8-ին, $11^{1}/_{2}$ ժամին, կիրակի օրը, շտապեն եկեղեցի ժողովին մասնակցելու։
Գործակալ ա. մ. Թիֆլ. Գրիգոր աւ. քահ. Մանդակունի
(ու. կ.) 193. 2—1



!!ԵՐԲԵՔ ՉԵՂԱԾ!!
Միայն 2 րուբլի 55 կօպէկով
ուղարկում ենք հետեւեալ արժէքաւոր 4 իրերը. 1) Տղամարդ. գրպ. էլեգանտ և ամուր ժամացոյց՝ «Անկէր» (և ոչ ցիլինդր), անգլ. սև պողպատից, լարելը առանց բանալիի՝ 36 ժ. մի անգամ, ընթացքը 10 քարերի վրա։ 2) Նոր ձևի էլեգանտ շղթայ։ 3) Բրէլօկ-կինեմատօգրաֆ՝ պիկանտ տեսարաններով, կամ թէ կողմնացոյցով։ 4) Այծեմաշկի քսակ՝ ժամաց. փչանալուց պահպան. համար։ Ամբողջ զարնիտուրի գինն է միայն 2 ր. 55 կ., 2 զարն.—4 ր. 85 կ։ «Placke» կոչվող ժամաց., շվէյցար. իսկական ոսկուց, բաց, բոլոր յաւելուածներով.—4 ր. 25 կ., 2 զարն. 8 ր.։ Սև ժամաց. բաց, շատ տափակ,։ «Moser» յայտնի ֆար., 10 քար. վրա, բոլոր յաւելուածներով—3 ր. 50 կ., 2 զարն. —6 ր. 50 կ.։ Տղամ. ժամ. 8-օրեայ լարումով, սև պողպատից—5 ր., 2 հատը—9 ր. 50 կ.։ Ճանապարհածախքը 1—4 հատի համար՝ 40 կ. (Սիբիր՝ 75 կ.)։ Ամեն մի ժամաց. կցվում է երաշխաւորութիւն 6 տարով։ Ուղարկ. պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Հասցէագրել՝ Т-ву „ВПЕРЕДЪ Варшава, Панская 39/33.
(6,13,24.ապ. 3,14) (В.15727) 190. 5—1



200 ՌՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ
ով ապացուցի, թէ մեր ապրանքը չէ համապատասխանում գնին։ 12 ր. տեղ միայն 3 ր. 95 կ. ուղարկում ենք 10 անհրաժեշտ, արժէքաւոր իր. 1) Սև պողպ. տղամ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ, առանց բանալիի լարվող ժամացոյց, րոպէ առ րոպէ ճշտած, 8 տարվայ երաշխաւորութեամբ. 2) գեղեցիկ. չը սևացող շղթայ. 3) նոյնպիսի նորաձև բրելօկ. 4) զամշի պարկ, ժամաց. փչանալուց պահելու. 5) կաշուէ նորաձև քսակ 6 բաժ., հարթ և գրպանում պահելու խիստ նպաստաւոր. 6) շահաւէտ նորոյթ—ամերիկ. անվտանգ «Սանիտա» ածելի, որով ամեն մարդ, առանց որևէ պատրաստութեան կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկելի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. Դուբլէ—մատանի «Օպալ» քարով։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 զարնիտ.—7 ր. 40., պատուէրն ստանալուն պէս, վեր. վճ. և առանց կանխավճ.։ Նոյնպիսի զարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամացոյցով, 4 ր. 50 կ., 2-ը 8 ր. 50 կ.։ 1—2 զարնիտ. ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Հասցէն՝ Т-во «Заря», Варшава, 65։ Վերոյիշեալ զարնիտ. փակ ժամացոյցով 1 ռուբ. աւելի։
(ու) (В. 15295) 180. 1—1

ՇԱՏ ՔԻՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՎ
իւրաքանչիւր մարդ կարող է թէ իր և թէ իր ընտանիքի հագուստը ձեռք բերել ու ստանալ օգտաւէտ թանգագին իր՝ յայտնելով բաց նամակով իր հասցէն ВАРОНЪ И МАРКОВИЧЪ ընկերութեան։ Депо суконныхъ и мануфакт. товар. г. РОВНО, А. Вол. г.
(ու. ե.) (П. 26622) 194. 6—1

ВѢРНО
1-ый СОРТЪ
И. ШТРУМФЕЛЬДЪ
ВАРШАВА

ՄՈԴԱՅԻՆ, ԳՈՐԾՆԱԿԱՆ, ՍԻՐՈՒՆ
Ստուգված են միայն պատէնտ ունեցող մեր «ԴԵԿԱԴԱՆՍ» ժամացոյցները։
Տղամարդկանց այդ բաց ժամացոյցները երեակ. մետալական ցիֆէրբլատով, ընթացքը քարերով, քոքվում է առանց բանալիի 40 ժամը մի անգամ։ Ժամացոյցի կորպուսը ամենատափակն է մետալից հին արծաթի նման դրոշմված զանազան նկարներով (նայիր նկարը)։ Երբեք չեն կորցնում իրանց սկզբնական տեսքը։ Շնորհիւ ահագին վաճառքի, մենք հնարաւորութիւն ունենք ծախել ամենաէժան գնով. միայն 3 ր. 50 կ., իսկ 2 հատը 6 ր. 50 կօպէկով։ Կանանց նոյնպիսի ժամացոյցներ 4 ր. 50 կօպէկով։
ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է. Բերել տուէք միայն «Դէկադանս» ժամացոյցը և դուք միշտ շնորհակալ կը մնաք մեզանից։ Ուղարկում եմ մինչև րոպէները ստուգված ժամացոյցները վերադիր վճարով և առանց կանխավճարի, երաշխաւորելով ժամացոյցի ընթացքի ճշտութիւնը և մետալի ամրութիւնը 6 տարով։ Մինչև 4 հատի առաքումը 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Նոր ոսկէ շղթաներ բրէլօկով 75 կ. և 1 50 կ. հատը, երկճիւղ շղթան 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէն. И. Штрумфельдъ. Варшава, Св. Креста № 48. отдѣл. 23.
(յ. 9, 31, փ. 6, 20, մ. 6, 20) (66705) 2. 6—5



ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակի մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի խանութներում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
Իսկականը միայն այս դրոշմով
С.ПЕТЕРБУРГЪ
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՌԵԶԻՆ. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ТРЕУГОЛЬНИКЪ"
ԱՆՈՒՆՈՎ
Թիֆլիսի բաժանմունքը գտնվում է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ
ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՃՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՌԵԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Կրեմ և Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
182. 0—2

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.